




ԼՈՅՍ ԿՐՕՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՌԱՄՍԵԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Յուլիս - Օգոստոս - Մեպտեմբեր
ԺԵ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3, 2017 (76)



LUYS REVUE TRIMESTRIELLE

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200

Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերափոխումն Ա. Աստուածածնի

Բարգէն Ա. քինյ.
Մագսուտեան

Սուրբ Աստուածածին

Գրիգոր Հոթոյեան

Երկիւղ Տեանն...

Յակոբ արք. Գլնճեան

Հայց. Եկեղեցւոյ պաշտամունքի լեզուն

դոկտ. Զաւէն Ա. քինյ.
Արզումանեան

Աղօթքի պէս...

Երան Գոյումճեան

The symbolic wealth of the Armenian 'Khach'k'ars'

Rev. Fr. Dr.
Abel Manoukian

The history of the song Giligia

Krikor Pidedjian

2017՝ Զահրատի մահուան 10րդ տարելից

Սօսի Միշոյեան-
Տապաղեան

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

«Օրհնեալ ես դու ի կանայս»

(Ղկա. Ա. 42)

Հայաստանեայց Եկեղեցին իր տօնացոյցին մէջ Ս. Աստուածանայ յատկացուցած է մէկ քանի տօներ, սակայն ասոնց մէջ ամենէն կարևոր տեղը տուած է իր վերափոխման, և այդ իսկ պատճառաւ զայն վերածած է տաղաւար տօնի, այսինքն հինգ մեծ տօներէն մէկն է անիկա:

Եկեղեցական բովանդակ պատմութեան մէջ չկայ իգական սեռի այլ ներկայացուցիչ մը, որ բարձրացած ըլլայ Ս. Կոյսի գտած աստուածային ընդունելութեան և վայելած՝ երկնային գերագոյն շնորհը: Անիկա Աստուծոյ կողմէ միակ ընտրեալը հանդիսացաւ և կիներու մէջ «օրհնեալ»ը:

Դժբախտաբար Ս. Կոյսի կեանքին մասին լման տեղեկութիւններ չեն տար Աւետարանները, այլ հոն կը յիշատակուին այն մասերը, որոնք առընչութիւն ունին Յիսուսի կեանքին հետ: Իր կենսագրութիւնը կ'ամբողջանայ ասանդութիւններով, որոնց մէկ մասը շատ զօրաւոր հաստատումներ են: Այս ասանդութիւնները գրուած են Ս. Աստուածանայ անունը կրող անվաւեր ավետարաններու մէջ, որոնք ամփոփուած են «Աստուածաշունչի կորսուած գիրքեր» անունը կրող հատորին մէջ:

Ս. Կոյսը ուխտի զաւակ եղած է: Յովակիմ և Աննա տարեց ամուլը զաւակ չունէին, վասնզի վերջինը ամուլ էր: Աստուծոյ կողմէ շնորհուեցաւ այս զաւակը որպէս պատասխան յիշեալ սրբակեաց ամուլի աղօթքին և ուխտի խոստումին: Մարիամ «թէև ծնաւ բնութեան օրինաց համեմատ, այսինքն ի հօրէ և ի մօրէ, բայց բացարձակապէս զերծ սկիզբէն իսկ հասարակ մահկանացուներու աղամական արատաւորութենէն» (Սուրբք և Տօնք):

Անիկա երեք տարեկանին տաճարին ընծայուեցաւ ու ժամանակ մը մնաց հոն: Եօթը տարեկանին դարձեալ վերադարձաւ հոն, ուր ապրող բարեպաշտ այրիներու և կոյսերու խումբին հետ սրբակեաց կեանք մը ապրեցաւ և զարգացաւ իր ազգին կրօնական գիտելիքներով և զօրացաւ երկնային ներշնչումներով:

Եօթը տարի յետոյ երբ տաճարէն արձակուելու ժամանակը հա-

սաւ, Մարիամ չէր ուզեր բաժնուիլ, վասնզի հոն կեանքի կատարելութեան կը հասնէր, հրեշտակային այցելուներ կ'ընդունէր և անոնց հետ կը խօսակցէր: Կամաց կամաց հոգեկան մաքրութեամբ և սրբութեամբ կը դադրէր այս աշխարհէն ըլլալէ և կը դառնար ինքն ալ «հրեշտակ ի մարդկանէ»:

Ըստ հրէական սովորութեան մեծ Տօնին առիթով բարեպաշտ մարդիկ տաճար կը դիմէին և իրենց թեկնածութիւնը կը դնէին կոյսերուն հետ ամուսնանալու: Այս առիթով քահանայապետը կ'աղօթէր և Աստուծոյ հրահանգը կ'ակնկալէր: Անիկա թեկնածուներու գաւազանները կը տանէր սեղանին առջև ու կը մատուցանէր Եհովային մարգարէական խօսքին իրագործումը տեսնելու համար:

«Ու Յեսսէի բունէն շառաւիղ պիտի ելլէ,
Եւ անոր արմատէն ընձիւղ պիտի բուսնի»
(Ես. ԺԱ. 1):

Երբ քահանայապետը Յովսէփ անունով բարեպաշտ մարդունը գաւազանը մատոյց Աստուծոյ, Մարիամին համար, գաւազանը ծաղկեցաւ և աղանի մը եկաւ անոր վրայ: Այն ատեն քահանայապետը հասկցաւ մարգարէութեան իրագործումը և Մարիամը նշանեցին Յովսէփին:

Թէև նշանեցին զինք ամուսնութեան համար, սակայն Աստուծոյ տնօրինութիւնը տարբեր էր: Գաբրիէլ հրեշտակ երևցաւ սրբուհոյն և բարևեց զինք ըսելով. «Ուրախ եղիք շնորհալի, Տէրը քեզի հետ է» (Լուկ. Ա. 29):

Հրեշտակին ատեման լուրին դիմաց Մարիամ իր հոգեկան հերոսութեամբ կրցաւ պատասխանել «Եղիցի ըստ բանի քում»:

Մարդկային բովանդակ պատմութեան մէջ առաջին և միակ անգամն էր որ մարդէղութիւն տեղի պիտի ունենար և անոր որպէս միջոց և ճանապարհ ընտրուած էր այս կոյսը: Եւ առանց պատճառի չէր որ Մարիամ կ'իներուն ընտրեալը եղաւ և «օրհնեալ»ը կոչուեցաւ:

Հետևելով իր ասանդական և սուրբ գրական կեանքին կը տեսնենք որ մեծցած էր կրօնական միաթիք մթնոլորտի մէջ, ինքզինք ամբողջութեամբ Աստուծոյ նուիրելով:

Հետևաբար հոգիով ու մտքով եղած էր անբիծ, նկարագրով՝ մաքուր և հաստատ, վասնզի կրցաւ հրեշտակի ատեման ամբողջ պատասխանատուութիւնը յանձն առնել մարդկային մտածողութեան դէմ ինքզինք պաշտպանելու քաջութեամբ:

Եղած է համեստ ու խոնարհ, ինչ որ կը տեսնենք մեր Տիրոջ ծննդեան առիթով: Իր գաւկին հանդէպ գուրգուրացող և նուիրող մայր, ինչ որ երևան կուգայ Եգիպտոս փախուստին և Երուսաղէմ ուխտի երթալուն առիթներով: Տակաւին Անոր հասուն տարիքին գացած տեղերը ետևէն երթալով ու փնտռելով զինք: Նոյնիսկ խաչին ներքև խոցոտուած սրտով կը տեսնենք զինք:

Հեզ ու քաղցրաբարոյ խառնուածքին շնորհիւ կրցաւ ապրիլ Յովհաննէսին և առաքեալներու հոյլին հետ:

Ս. Կոյսը Յիսուսի մահէն և յարութենէն յետոյ ապրեցաւ 15 տարի, միշտ առաքեալներու խումբին մէջ, ներկայ ըլլալով նոյնիսկ Հոգեգալստեան օրը Վերնատան մէջ:

Երբ կը կնքէ իր մահկանացուն բոլոր առաքեալները, բացի Բարթողիմէոսէն որ բացակայ էր քաղաքէն, «մեծ հանդիսութեամբ և ջահալոյց թափօրով» կը կատարեն յուղարկաւորութիւնը և կը թաղեն Գերթեմանիի մէջ, ուր այսօր իր անունով եկեղեցի մը գոյութիւն ունի և անոր թափուր գերեզմանին վրայ ամէն առաւօտ Ս. Պատարագ կը մատուցուի:

Թաղումէն յետոյ իր գերեզմանին շուրջ երեք օր և երեք գիշեր հրեշտակային երգակցութիւն կը լսուի բայց ոչ ոք կը հասկնայ այս խորհուրդը:

Բարթողիմէոս առաքեալ երբ Երուսաղէմ կը վերադառնայ, կ'իմանայ եղելութիւնը և կը փափաքի վերջին անգամ տեսնել Տիրամայրը:

Առաքեալներ կը բանան գերեզմանը և թափուր կը գտնեն զայն: Այն ատեն կը հասկնան լուծած երգակցութեան իմաստը: Անոնք կը հետևեցնեն թէ Տիրամայրը չէր մեռած այլ քնացած էր, և Յիսուս իր մօրը ըրած խոստումին համաձայն զինք երկինք փոխադրած էր: Այս գործողութիւնը կը կոչուի «Վերափոխում», որ վերածուած է եկեղեցւոյ մեծագոյն տօներէն միոյն:

Հոս հարց կը ծագի նաև թէ ինչու Մարիամ յաւէտ Ս. Կոյս, Աստուածածին և Աստուածամայր կը կոչուի:

Քրիստոսի աշխարհ գալու պարագան առնուածն ութ հարիւր տարի առաջ յայտնուած էր մարգարէին բերնով:

«Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչուի» (Ես. Է. 14):

Որով մարդեղութիւնը տեղի պիտի ունենար Մարիամին մէջ և

Մարիամին միջոցաւ: Ան յաիտենական Աստուծոյ ընտրեալն էր այս նպատակին համար:

Եթէ ենթական Աստուծոյ կողմէ ընտրեալն է, անիկա այլևս մարդոց չի կրնար պատկանիլ:

Ապա երբ իրմէ ծնածը Աստուծոյ որդի է, որ Հօրը հետ նոյն բնութիւնը և էութիւնը ունի, և Մարիամէն լոկ մարմին կ'առնէր մարդկային կերպարանքով ներկայանալու աշխարհի, զայն ծնողը կը դառնայ Աստուածածին, և որպէս մայրը Անոր՝ Աստուածամայր:

Նոր եկեղեցիներ կան որոնք Ս. Մարիամի յաիտենական կուսութիւնը և Աստուածածին ըլլալը կը մերժեն: Այս գաղափարը սկսած է չորրորդ դարուն սկիզբը Արիոսով, որ նզովուած է Տիեզերական ժողովէն: Այս առիթով, 325 թուականին, պատրաստուած է Նիկիոյ Հանգանակը:

Նոր եկեղեցիներէն ոմանք կ'ընդունին Քրիստոսի աստուածութիւնը և սակայն կը մերժեն Ս. Կոյսի Աստուածածին ըլլալը: Այս երկու գաղափարները իրարու հետ խոտոր կը համեմատին: Քրիստոս ի յաիտենից Աստուած էր և զինք ծնողը չի կրնար մարդածին ըլլալ, այլ Աստուածածին:

Հայաստանեայց եկեղեցին հին հին դարերէն սկսեալ այս վերջին տեսակէտին փարեցաւ, որ ճշմարիտ տեսակէտն է:

Հայ ժողովուրդը քրիստոնէութիւնը ընդունելէ յետոյ «Մայր ամենայն զգաստութեանց» Անահիտի փոխարէն յարգեց ու սիրեց Ս. Աստուածածինը: Հայ մայրերը զայն այնքան սիրեցին որ փափաքեցան անոր առաքինութիւնները իրենց զուակներուն վրայ զարդարուած տեսնել և անոր տրուած ածականներով և ստորոգելիներով անուանեցին իրենց զուակները զանոնք կոչելով Մարի, Մարիամ, Սրբուհի, Երանուհի, Մաքրուհի, Տիրուհի, Իսկուհի, Թագուհի կային, կային:

Հուսկ ապա Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը ներշնչման աղբիւրն է իգական սեռի ներկայացուցիչներուն համար, և առ հասարակ բովանդակ քրիստոնէայ աշխարհին համար, թէ մարդ էակը սրբակեաց կեանքով և երկնային առաքինութիւններով օժտուելով կրնայ հասնիլ կեանքի կատարելութեան, որ Աստուծոյ կամքը կատարելուն և Անոր միանալուն մէջ կը կայանայ:

Բարգէն Ա. Քինյ. Մագուտեան

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ողջո՛յն Սուրբ Մարիամ, Մայր Աստուածածին,
Մայրութեան կոչուած ընտրեալ գոհար,
Աստուծոյ կամքով, հրաշքով պայծառ,
Կեանք պարգևեցիր Փրկիչ Յիսուսին:

Երկինքէն փայլող աստղ մը բացառիկ
Երեք մոգերը հասցուց Բեթղեհէմ,
Որոնք նուէրով, աղօթքով վսեմ,
Լուռ խոնարհեցան արքային մանկիկ:

Պատասպարելով Աստուծոյ Որդին,
Անշուք մտորը լուսաւորուեցաւ,
Հրեշտակներու երգով տրուեցաւ
Մեծ անտիսը ամբողջ աշխարհին:

Աստուածածին մայր, տաճար սրբութեան,
Աստուածային լոյս, բարութեան պարտէզ,
Արև շողշողուն՝ անաղարտ ու վէս,
Կարկաջին աղբիւր, ծաղիկ անթառամ:

Աստուծոյ Որդին ծնած ըլլալով,
Փառաւորուեցար անկեղծ յարգանքով
Քու ժողովուրդէդ, որոնք անվրդով
Կ'ապրէին հպարտ՝ Յիսուսի խօսքով:

Եւ պատահեցաւ ինչ որ գրուած էր.
Քու Որդիդ անմեղ՝ մարդկութեան Փրկիչ,
Նախանձող մարդիկ ի խաչ հանեցին,
Որոնց մեղքերը Ան միշտ կը ներէր:

Զակիդ կորուստին ի՛նչպէս դիմացար,
Վիշտդ դառնագին ի՛նչպէս կրեցիր,
Ո՛վ Աստուածամայր Մարիամ սգակիր,
Մութ գերեզմանէն երբ բաժնուեցար:

Սակայն Աստուածներ չեն մեռնիր երբեք,
Աստուծոյ Որդին՝ Յիսուս խաչեցեալ,
Երեք օր յետոյ եղաւ յարուցեալ,
Մխիթարելով մօրը վշտաբեկ:

Տասնըփնգ տարի յետ խաչելութեան,
Սուրբ Աստուածածին, Քրիստոսի մայր,
Աստուծոյ կամքով վերափոխուեցար,
Արժանանալով զակիդ միացման:

Ո՛վ Սուրբ Մարիամ, կ'աղաչենք քեզի,
Որ բարեխօսես զակիդ՝ Յիսուսի,
Որ պարզևէ մեզ նոր հաւատք յոյսի,
Նոր սիրով աղբիւր՝ որ հասնի մեզի:

Գրիգոր Հոթոյեան

ԵՐԿԻՒՂ ՏԵԱՌՆ

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է, ԹԷ՛ ԼԱՓՈՂ ԿՐԱԿ

Սովորաբար ընդունուած է ասել, թէ Աստուած սէր է, և սիրոյ մէջ երկիւղ չկայ, թէ մենք ոչ մի բանից չպէտք է վախենանք, միշտ ուրախ պէտք է լինենք, քանզի Աստուած մեզ սիրում է: Այս արտայայտութիւնը, որ ընդհանուր ճշմարտութեան միայն մէկ մասն է, անշուշտ հիմնուած է Ս. Գրքի վրայ, ուր, յատկապէս Նոր Կտակարանում, բազմիցս խօսուում է Աստծոյ սիրոյ մասին, ինչպէս օրինակ Յովհաննէս առաքեալի թղթում կարդում ենք. «Աստուած սէր է: Եւ սրանում երեւաց Աստծոյ սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի Նրանով կենդանի լինենք» (Ա Յովհ. Դ 8–9), «Աստուած սէր է. և ով սիրոյ մէջ է ապրում, բնակում է Աստծոյ մէջ, և Աստուած բնակում է նրա մէջ: Սիրոյ մէջ երկիւղ չկայ, և կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը, որովհետև երկիւղը տանջանքով է ուղեկցում, և ով երկնչում է, կատարեալ չէ սիրոյ մէջ» (Ա Յովհ. Դ 16, 18):

Այսօր, յատկապէս քրիստոնէայ որոշ աղանդների կողմից, այնքան է շեշտում «Աստուած սէր է» գաղափարը, որ շատերի մօտ տեղիք է տալիս սխալ ըմբռնումների, որով մոռացութեան է տրուում կամ երկրորդական է համարուում այն, որ Աստուած նաև արդար է: Նրա սէրը ակնկալում է մեր փրկութիւնը, քանզի դրա համար Նա մեզ մօտ ուղարկեց իր միածին Որդուն՝ Յիսուս Քրիստոսին, սակայն Նրա արդարութիւնն էլ հարուածում է խստասիրտ մեղաւորներին: Այնպէս որ «Աստուած չի խնայում իր սիրելուն, թէ նա եղաւ պատուիրազանց» (Ներսէս Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Երևան, 1982, էջ 165), «Բաւ չէ միայն վստահութիւն հանդէպ հաւատը ճշմարիտ, պէտք է գործերն արդարութեան միաբանել հաւատի հետ» (նոյն տեղում, էջ 169):

Սուրբ Գրքում Աստծոյ ողորմածութեան և գթասրտութեան առընթեր, ինչպէս տեսնում ենք Նինուէի զղջացող բնակիչների նկատմամբ (Յովհանն Գ 10), յաճախ հանդիպում ենք նաև Նրա արդար դատաստանին, Նրա սահմանած պատիժներին, որոնք հետապնդում են զլիսաւոր երկու նպատակ.

ա.- Մեզ սրբացնելու, դէպի իր մօտ առաջնորդելու և լցնելու իր անսահման սիրով: Նա մեզ սիրում է և համբերատար է՝ նոյնիսկ բազ-

մապատիկ անգամ եթէ մեղանշենք, սակայն, զգո՛յճ, չփորձենք չարաշահել Նրա համբերութիւնը.

բ.- Յոյց տալու իր ամենակարողութիւնն ու արդարութիւնը: Երբ շարունակում ենք մեր խստասրտութիւնը՝ յարատւելու մեղքերի մէջ, այն ժամանակ պատուիասում ենք: Թէ երբ է լցում Աստծոյ համբերութեան բաժակը, դա միայն Ինքը գիտէ: Հաւատացեալը պէտք է հսկի, զգաստ լինի և աղօթի, վախենայ բորբոքելու Տիրոջ արդար գայրոյթը: «Անուր պահենք շնորհը, և այդ շնորհով ծառայենք Աստծուն՝ իրեն հաճելի ձևով՝ ահով և դողով, քանզի մեր Աստուածը **լափող կրակ է**» (Եբր. ԺԲ 28--29): Ուրեմն, չպէտք է մոռացութեան տալ, որ Աստուած արդար է և չզոջացող մեղաւորին պատուիասող: Եթէ այդպէս չլինէր, բոլորն էլ, նոյնիսկ սատանան, երկինք կը գնային: Եթէ այդպէս չլինէր՝ կարիք չկար Քրիստոսի չարչարանքներով ձեռք բերուած մարդկային մեղքերի քաւութեան և մարդկանց փրկութեան: Իսկ խստասիրտ մեղաւորների համար հէնց ինքը՝ Քրիստոս ունի իր դատապարտման խօսքը. «Անիծեալներ, գնացեք ինձանից յախտնական կրակը, որ պատրաստուած է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. ԻԵ 41):

Հիմնուելով Յովհաննէս առաքեալի Յայտնութեան գրքի Ա. գլխի վրայ, կրոպական արուեստի միջնադարեան քանդակներում և սրբապատկերներում շատ անգամ Քրիստոսը ներկայացուած է իբրև դատաւոր, որի «բերանից ելնում է սրած երկաայրի սուր», Նա մի ձեռքով դատապարտում է, և միւսով՝ վերականգնում ու ազատագրում: Երբեմն համարեա նոյն ձևով պատկերուած է նաև Հայր Աստուած, որի աջ և ձախ կողմերում հանդէս են գալիս Յիսուսն ու Մարիամ Աստուածամայրը իբրև բարեխօսներ: Տիրոջ աջ և ձախ ձեռքերը, մէկը դէպի վեր բարձրացած՝ իբրև փրկութեան խորհրդանիշ, միւսը դէպի վար թեքուած՝ իբրև դատապարտման վճիռ, ներկայացնում են Նրա ամենագոր էութիւնը՝ իր զոյգ դրսևորումներով:

Նա, ով միայն Աստծու սերն է քարոզում, և իբրև իր փրկութեան երաշխիք բաւարար է համարում Նրա կատարեալ բարութիւնն ու անչափ ողորմածութիւնը, սխալում է: Մենք բոլորս էլ մեղաւորներ ենք և, ըստ Յովհաննէս առաքեալի, «եթէ ասենք՝ «մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտութիւն չկայ մեր մէջ» (Ա Յովհ. Ա 8): Հակառակը պնդել, թէ մենք անմեղ ենք կամ Աստծու հանդէպ ունեցած մեր հաւատով արդէն իսկ ապահոված ենք մեր փրկութիւնը,

կը նշանակէ գոռոզամիտ ենք և յաակնոտ, հետևաբար, կրկնակի մեղաւոր: Յաւակնոտութիւնը կամ անխոհեմ յոյսը դառնում է կործանարար, որովհետև այն շեղում է աստուածային արդարութեան և իմաստութեան կողմից հաստատուած կարգից: Ըստ այդ հաստատուած կարգի՝ մեղաւորը նախ պէտք է անկեղծօրէն զոջայ իր գործած մեղքերի վրայ և ապա ակնկալի Աստծոյ ողորմութիւնն ու քաւութիւնը: Առանց զոջումի չկայ ներում, ինչպէս որ առանց արդար վաստակների չկայ փառաց պսակ: Չարդարացուած վստահութիւնը Աստծու հանդէպ քաջալերում է մարդկանց յարատևելու իրենց մեղքերի մէջ, հեռացնում է նրանց բարի պայքարից ու առաքինի կեանքից:

Աստղներ էլ կան, թէ Հին Կտակարանի Աստուածը վրէժխնդիր է, մարդկանց սպառնացող ու պատժող, մինչդեռ Նոր Կտակարանի Աստուածը, որ յայտնում է Յիսուս Քրիստոսով, գթասիրտ է, համբերող ու ներող: Այդ աստղները, սակայն, նկատի չեն առնում, որ այդ միևնոյն Աստուածը թէ՛ Հին Կտակարանում և թէ՛ Նորում հէնց չզոջացող մեղաւորին է դատաստանի ենթարկում, իսկ արդարին էլ՝ փրկում, ինչպէս եղավ Քրիեղեղի ժամանակ կամ մեղքերով ապակաւնուած սողունացիների պարագայում: Այս մասին մեր մատենագիրներից Եզնիկ Կողբացին շատ ճիշտ է արտայայտուել. «Ո՛վ անմիտներ ու մոլորուածներ, եթէ ահաւոր սպառնալիքների պատճառով էք փախչում Օրէնքի Աստծուց (այսինքն՝ Հին Կտակարանի Աստծուց), իսկ Յիսուսը տալիս է նրանից անելի սպառնալիքներ՝ անշէջ հուր, անմահ որդ, յալիտենական տանջանքներ, ո՛ր պիտի փախչէք: Ակնյայտօրէն չի՞ երևում, որ թէ՛ Հին Կտակարանը և թէ՛ Նորը տուողը մէկն է» (Եզնիկ Կողբացի, Եղծ Ադանդոց, Երևան, 1970, էջ 177):

ԵՐԿԻՒՂԸ ԻՐԻՏԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՍ

Վստահաբար գոյութիւն չունի մի անձ, որ իր կեանքում երբևէ երկիւղ չի կրել որևէ մէկից, որևէ պատահարից կամ երևոյթից: Երկիւղը մարդկային զգացում է, այսինքն՝ մարդկային բնութեան յատուկ: Երկիւղի տեսակները բազմազան են. երկիւղ հզօրից, մահից, խաւարից, անորոշ ապագայից, մերժուած լինելուց, խոշտանգուելուց, չհասկացուելուց, նախատուելուց, պատժուելուց, առանձնութիւնից, բնութեան աղէտներից, վայրի գազաններից ու սողուններից և այլն: Արիասիրտ մարդը պայքարում է իրեն սպառնացող երկիւղների դէմ և կարողանում է դրանց շատերի դէմ պաշտպանուել, միջոցներ գտ-

նել դրանք յաղթահարելու: Դրա համար հարկաւոր է մարդկային և հոգեկան հասունութիւն ու փորձառութիւն, ինչպէս նաև առողջ դաստիարակութիւն՝ ընտանեկան և հասարակական առողջ միջավայրում:

Այստեղ մենք նկատի չունենք այն եսակենտրոն և հասարակական երկիւղը, որը մղում է մարդուն վախկոտութեան, նրա նկարագրի խաթարման ու անբարոյական արարքների, երբ ենթական փնտռում է միայն իր անձնական շահն ու ապահովութիւնը, դիրքն ու պաշտօնը, և դրանք չկորցնելու մտավախութիւնից ելնելով՝ ոտնակոխ է անում բարոյական բոլոր չափանիշները: Այլ մեր խօսքը վերաբերում է մարդու բնագոյային կամ նախնական երկիւղին, որում գոյութիւն չունի որևէ հաշուենկատութիւն:

ԵՐԿԻԻՂԸ ԿՐՕՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ

Կրօնական իմաստով երկիւղը սուկական վախ չէ, այլ այն իր մէջ պարփակում է Աստծոյ նկատմամբ խորին պատկառանք, կատարեալ վստահութիւն և անմնացորդ նուիրում: Մի խօսքով, երկիւղը՝ հաստատուած անկեղծ պատկառանքի և արդարացուած վստահութեան զգացումների վրայ, վերածում է յոյսի և սիրոյ: Այն երաշխիքն է հաւատացեալի ուղղամտութեան ու ընդհանրապէս բարոյական գոյութեան, ինչպէս կարդում ենք Ժողովողի Գրքի ԺԲ գլխի 13-րդ համարում, ըստ եբրայական բնագրի. «Վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր Նրա պատուիրանները, քանզի այս է մարդն ամբողջովին», այսինքն՝ Աստծուց երկնչելն ու պատուիրանապահութիւնը բնորոշում են մարդ արարածին, որոնցով նա տարբերում է միս ստեղծուածներից (*լրես՝ Յակոբ եպս. Գլնճեան, «Կոհելէթ», էջ 202*) և ձեռք է բերում հոգեկան խաղաղութիւն ու երջանկութիւն: Թէև երկիւղ և երջանկութիւն իրար հակադիր բաներ են, սակայն կրօնական իմաստով պիտի տեսնենք, որ նրանք ամբողջացնում են միմեանց:

Նոյսօրինակ հակասութիւն տեսականօրէն հանդէս է գալիս նաև Յիսուսի խօսքերում, երբ ասում է. «Լսի՛ր, Բարայէլ, պատուիրանների մէջ ամէնից առաջինն է՝ մեր Տէր Աստուածը միակ Տէրն է, և դու պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զօրութեամբ. սա՛ է առաջին պատուիրանը: Եվ երկրորդը նման է սրան. դու պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս ինքդ քեզ. չկայ ուրիշ պատուիրան ասելի մեծ, քան սրանք» (Մարկ. ԺԲ 29-31), նաև՝ «Ցոյց կը տամ ձեզ, թէ ումից պէտք է

վախենաք. վախեցէ՛ք նրանից, ով սպանելուց յետոյ գեհէն նետելու իշխանութիւն ունի: Այո՛, ասում են ձեզ, վախեցէ՛ք նրանից» (Ղուկ. ԺԲ 5):

Աստծուց երկնքէլ նշանակում է նաև՝ փառաբանել, պաշտել և հնազանդուել Նրան: Գրա լաւագոյն օրինակները տալիս են Հին Կտակարանում հանդէս եկող հաւատի նախահայրերը, որոնցից յատկապէս Աբրահամը նշանաւորում է Աստուծոյ հանդէպ իր դրսևորած հնազանդութեամբ՝ իբրև արդիւնք աստուածավայելութեան, երբ պատրաստ էր նոյնիսկ զոհելու իր սիրելի որդուն, սակայն լսում է Տիրոջ պատգամաբերի ձայնը. «Ձեռք մի՛ տուր պատանուն, նրան որևէ վնաս մի՛ պատճառիր, որովհետև այժմ համոզուեցի, որ դու երկիւղ ունես Աստծու նկատմամբ և ինձ համար չես խնայի քո որդուն» (Ծ՛ննդ. ԻԲ 12): Աբրահամի՛ Աստծու հանդէպ ունեցած երկիւղը արտայայտւում է նաև այն վստահութեամբ, որ Աստուած կարող էր նոյնիսկ մեռելներից յարութիւն տալ իր որդուն (Տե՛ս Եբր. ԺԱ 19):

Հին Կտակարանի աստուածավայել մարդկանցից է նաև Յովբը (հմմտ. Յովբ Ա 1: Գրաբար բնագրում աստուածավայել բառի փոխարէն շատ անգամ դրուած է՝ աստուածապաշտ): Յովբը բազում փորձութիւններ ու դժբախտութիւններ կրելով հանդերձ՝ անսասան հաւատով յոյր դնում է իր Փրկչի վրայ, և դա արդիւնք է իր աստուածավայելութեան, որն իրեն յոյս և վստահութիւն է ներշնչում Ամենակարողի նկատմամբ: «Գիտեմ,— ասում է նա,— որ իմ Փրկիչս կենդանի է, և Նա վերջում պիտի բարձրանայ երկրի վրայ» (Յովբ ԺԹ 25):

Նոր Կտակարանում կարելի է նկատի ունենալ Սիմէոն Ծերունուն, որի մասին Ղուկաս անետարանիչը գրում է. «Այդ մարդը արդար ու աստուածավայել էր և ակնկալում էր Իսրայէլի մխիթարութիւնը. և Սուրբ Հոգին էր նրա մէջ» (Բ 25): Ուրեմն, միայն նա՛ կարող է աստուածավայել լինել, ում հետ է Ս. Հոգին:

ԱՍՏՕՈՒՑ ԵՐԿՆՉԵԼԸ ԻԲՐԵՒ ՇՆՈՐՀ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ

Ճշմարիտ աստուածավայելութիւնը մարդու ունեցած բնածին երկիւղը չէ իրենից հզօր ուժերի նկատմամբ, այլ այն արդիւնք է Ս. Հոգու զօրութեանը, որով մերձենում ենք Աստծուն և լցւում իմաստութեամբ, իսկ «իմաստութեան սկիզբը Աստծոյ երկիւղն է» (Առակք Ա 7, Սաղմ. ՃԺ 10, Սիրաք Ա 16, 22): Այդ իմաստութիւնը կայանում է Աստծոյ խօսքի ճանաչման, գիտութեան և հասկացողութեան մէջ, խօսք, որ Ս. Հոգու միջոցով է յայտնւում բոլոր նրանց, ովքեր երկնչւում են Աստծուց:

Այս առումով Պօղոս առաքեալն ասում է. «Արդարև իմաստութիւնը քարոզում ենք չափահասներին, իմաստութիւն, որ այս աշխարհինը չէ, ոչ էլ այս աշխարհի՝ կործանման սահմանում իշխաններինը, այլ քարոզում ենք Աստծոյ իմաստութիւնը, ծածուկ, խորհրդաւոր, որն Աստուած սահմանել էր մեր փառքի համար նախքան յալիտեանները, որն այս աշխարհի իշխաններից ոչ մէկը չհասկացաւ. որովհետև, եթէ հասկացուած լինէր, արդարև փառքի Տիրոջը չէին խաչի, այլ, ինչպէս գրուած էլ է. «Ինչ որ աչքը չտեսաւ, և ականջը չստէ, և մարդու սիրտը չընկաւ, Աստուած պատրաստեց իր սիրելիների համար»:

«Բայց Աստուած մեզ յայտնեց իր Հոգով. որովհետև Հոգին քննում է ամէն ինչ, նաև՝ Աստծոյ խորութիւնները, քանզի մարդկանցից ո՞վ է, որ բան գիտէ մարդու մասին, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ նրա մէջ է: Նոյնպէս և ոչ ոք չգիտէ Աստծոյ խորութիւնները, եթէ ոչ՝ Աստծոյ Հոգին: Ուրեմն մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է, որպէսզի ճանաչենք այն, որ Աստծուց շնորհուեց մեզ: և ինչ որ յայտնում ենք, ոչ թէ ճարտար խօսքերի մարդկային ուսուցումով է, այլ Հոգու վարդապետութեամբ, հոգևոր բաները հոգևորների հետ ենք համեմատում. քանզի շնչաւոր մարդը Աստծոյ Հոգունը չի ընդունում, որովհետև այդ յիմարութիւն է նրա համար. և չի կարող հասկանալ, եթէ հոգեպէս է քննում: Իսկ հոգևոր մարդը քննում է ամէն ինչ. և ինքը ոչ ոքից չի քննում: Իսկ արդ՞ո՞վ իմացաւ Տիրոջ մտածումը, որ խորհուրդ տայ Նրան. բայց մենք ունենք Քրիստոսի մտածումը» (Ա Կորնթ. Բ 6-16):

Նրանք, ովքեր առանց Աստծոյ երկիւղի, առանց Ս. Հոգու օգնութեան, այլ պարզապէս վստահելով իրենց մտային սեփական կարողութեանը՝ փորձում են լոկ ուսումնառութեան ճանապարհով իմաստութեան հասնել, ձախողում են և ընկնում որոգայթի մէջ, քանզի «գիրն սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում» (Բ Կորնթ. Գ 6): Այս խօսքը վերաբերում է յատկապէս նրանց, ովքեր Աստծոյ սրբազան երկիւղը մի կողմ թողած, զբաղում են աստուածաբանական դատարկ վէճերով կամ ցանկանում են փառաւորութիւն իբրև աստուածաբան ու եկեղեցու դոկտոր, մինչդեռ չեն հասկանում, որ մեծագոյն աստուածաբանը հէ՛ց ինքը՝ աստանան է, որ որևէ մեկից ատլի լաւ գիտէ, թէ Ով է Աստուած և ի՛նչ է կամենում, թէև սարսում է Նրանից, սակայն այդ երկիւղը ստրկական է, որի մէջ սէր չկայ, և դրանից է գալիս նրա կործանարար չարութիւնը:

Աստծոյ հանդէպ երկիւղը նաև մղում է մեզ պատասխանատուութիւն ստանձնելու միմեանց նկատմամբ և ծառայելու իրար: Այս իմաստով է ասում Պօղոս առաքեալը.

«Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով» (Եփես. Ե 21), քանզի «ոչ ոք Աստծուն երբեք չի տեսել: Եթէ միմեանց սիրենք, Աստուած բնակում է մեր մէջ. և Նրա սէրը մեր մէջ կատարեալ է» (Ա Յովի. Դ 12): Ուրեմն, դրդուած Աստծոյ երկիւղից, պէտք է յարգենք ու սիրենք միմեանց, որպէսզի Աստծոյ սէրը բնակուի մեր մէջ: Այդ սէրը հետզհետէ կը վանի մեր մէջ գոյութիւն ունեցող բոլոր տեսակի երկիւղները:

ԱՍՏԾՈՅ ՀԱՆԴԵՊ ԵՐԿԻՒՂԸ ԱՏԵԼԻ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՉԱՐԸ

Ըստ Առակաց գրքի (Ը 13), «Տիրոջ հանդէպ զգացուած երկիւղը ատելի է դարձնում չարը», այսինքն՝ այն մղում է հաւատացեալ մարդկանց բարեգործութեան և ատելու չարութիւնը, որը Ս. Գրքի միևնոյն հատուածում (ըստ. եբր. բնագրի) բնորոշում է գոռոզամտութեամբ ու սենզաւոր լեզուով: Հետևաբար, նրանք, ովքեր Աստծուց չեն երկնչում, գոռոզամիտ են: Դրանց թում պէտք է նկատի ունենալ այնպիսիներին, որոնք աստուածացնում են իրենց սեփական մոլորութիւնները՝ դրամի, դիրքի և վաղանցուկ փառքի հանդէպ: Այդպիսիք այս աշխարհում շատ անգամ ապրում են անպատիժ, այսինքն՝ ընթանում են ըստ իրենց մարմնի պահանջների, առանց երկնչելու աստուածային արդարութիւնից կամ առանց մտահոգուելու ուրիշների մարդկային իրաւունքների մասին: Այս առումով Պօղոս առաքեալը գրում է. «Չխաբուէք, Աստուած չի ծաղրում, որովհետև ինչ որ մարդս սերմանում է, նոյնը և կը հնձի. ով սերմանում է իր մարմնի համար, այդ մարմնից էլ կը հնձի ապականութիւն. իսկ ով Հոգու համար է սերմանում, այդ Հոգուց էլ կը հնձի յաւիտենական կեանք» (Գաղատ. Զ 7-8):

Ուրեմն այստեղ հարցը չի վերաբերում այն երկիւղին, որ մեզ ջլատում և յուսահատութեան է մատնում, այլ այն երկիւղին, որ մեզ մղում է հրաժարուելու մեղքից և դիմելու Աստծու օգնութեանը, չառաջնորդուելու մեր սեփական տկարութեամբ, որ մեզ կարող է հեշտութեամբ տանել դէպի մահացու մեղքերի հրապոյրը:

Աստուածավախ լինելը մեզ առիթ է տալիս մեր սիրտն ուղղելու դէպի լաւն ու բարին: Աստծու հանդէպ սէրն էլ մեզ մղում է ծառայելու Նրան և մեր նմաններին, սակայն Տիրոջ սրբազան երկիւղն է, որ մեզ

հիշեցնում է առկա վտանգների մասին: Նա, ով կարծում է, թե կատարեալ է սիրոյ մէջ և կարիք չունի Աստծոց երկնչելու, հեշտութեամբ ընկնում է ինքնախաբէութեան և գոռոզամտութեան որոգայթներում:

Մի խօսքով, Աստծոց երկնչել նշանակում է յատկապէս ատել այն, ինչ որ Աստուած ատում է, և սիրել այն, ինչ որ Աստուած սիրում է: Այս միտքը հիմնուած է Ս. Գրքի հետևեալ համարների վրայ. Սաղմ. Ա 1-3, ԻԵ 5, ԽԴ 8, ՂԷ 10, Առակք Ը 13, Զաք. Ը 17, Յովի. ԺԳ 34-35, Հռոմ. ԺԲ 9, Յայտն. Բ 6:

ԱՍՏՈՒՅ ԵՐԿՆՉԵԼԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԻ ՅԱՏԿԱՊԷՍ ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԿԻՒՂԸ

Շատերը Աստծոց երկնչում են պարզապէս այն մտահոգութեամբ, թե մի օր ենթակայ են լինելու Նրա անեղ դատաստանին: Ուրեմն այդ դատաստանի վախն է, որ երկիւղ է պարտադրում, սա մի ստրկական հոգեբանութեամբ դրսևորուող երկիւղ է, որն ինքնին անկաշկանդ և ինքնաբոլիս մի զգացումի արտայայտութիւն չի կարող լինել: Նման երկիւղով համակուած մարդիկ իրենց ողջ կենանքում մնում են երկիւղի գերիներ: Նրանք, սարսափելով Աստծոց և Նրա դատաստանից, պարտադրում են իրենց սեփական բնութեանը դէմ գործել, որպէսզի գերծ մնան պատուհասներից: Այսպիսի մի երկիւղ անծէք է, քանզի մտրակի սպառնալիքի տակ չի կարելի երջանիկ լինել: Միս կողմից էլ պարտադրուած երկիւղը ինչ որ չափով, թէկուզ ենթագիտակցաբար, ատելութիւն է առաջացնում պարտադրողի հանդէպ, «քանզի ականայ բռնադատուածը չունի անկեղծ սէր, ուստի չի կարող նաս ստանալ լրիւ փրկութիւն» (Գրիգոր Նարեկացի, Նարեկ, Բան ԻԷ):

Քրիստոնէաները նման մի երկիւղի հոգի չստացան, այլ նրանց ստացածը սիրոյ և որդեգրութեան հոգին է (հմմտ. Բ Տիմ. Ա 7, Հռոմ. Ը 15): Իսկ Աստծոց երկնչելը նախադրում է մի առողջ երկիւղ կամ պատկառանք հէնց այնպէս, ինչպէս որ երեխան տածում է իր հօր նկատմամբ, թէև սկզբում պատիժներից վախենալով, սակայն հետզհետեւ, երբ խելահաս է դառնում, որպէս զգուշութիւն սխալ գործելուց՝ պարզապէս չվշտացնելու համար իր սիրելի հօր սիրտը: Այս մէկը Սուրբ Հոգու շնորհն է, որ հաւատացեալին կարողութիւն է տալիս ճշմարտապէս պատուելու Աստծուն իբրև երկնաւոր Հայր և խուսափելու այն բոլոր մեղքերից, որ պատճառ են դառնում Նրանից բաժանուելուն:

Եթե պարտադրուած երկիրն իր մէջ ատելութիւն է բովանդակում, միս կողմից էլ որդիական երկիրը անբաժան է սիրոց: Որդին գիտակցում է, թէ պատուիրագանցութեան պարագայում արժանանալու է իր հօր յանդիմանութեանը կամ պատժին, սակայն արդար պատիժ կրելու դէպքում էլ չի դադարում հօրը սիրելուց, նրան «հայրիկ» անուանելուց, ինչպէս նաև փոխադարձաբար հայրը չի դադարում իր որդուն սիրելուց:

Նոյնպէս և Աստուած շատ անգամ զգացնել է տալիս իր զաւագանի հարուածը նրան, ում սիրում է, որպէսզի զգաստացնի ու փրկի նրան: Իսկ երբ բոլորովին անտեսում է իրեն անտեսողներին, ուրեմն նշանակում է, թէ դրանք արդէն իսկ դատապարտուած են յախտենալէս հեռու մնալու Աստծուց, այսինքն՝ մնալու խաւարում, կամ Ս. Գրքի լեզուով ասած՝ դժոխքում:

Լաւ հայրերը բռնակալ չեն լինի, ինչպէս որ մեր Երկնաւոր Հայրը բռնակալ չէ, այլ նրանք հէնց այդ հայրական սիրոց մղուած, զգուշացնում են իրենց զաւակներին վտանգներից, և, նկատի ունենալով դեռևս նրանց անչափահաս ու անփորձ լինելը, նրանց մտքերում դրոշմում են սխալուելու դէպքում պատիժ կրելու երկիրդի առողջ զգացումը: Դա այնպիսի մի չափազանցուած երկիրդ չէ, որ ջնջի որդիների վստահութիւնն ու սէրը իրենց հայրերի նկատմամբ, այլ դա մի սրբազան երկիր է, մի ճշմարիտ դեղամիջոց, որով որդիները ոչ միայն զգուշանում են մեղք գործելուց, այլ ժամանակը գալիս է, երբ ամենից առաջ մտածում են ցաւ չպատճառել իրենց հայրերին:

ԱՍՏՈՒԱԾԱՎԱԽՈՒԹԻՒՆՆ ԻՐ ՄԷՋ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ԱՐԻՈՒԹԻՒՆ

Երբ Աստուած դառնում է զղջացող մեղաւորի յոյն ու ապաւէնը, երկիրդը փոխում է վստահութեան, սիրոյ և արիութեան: Տէրն ասում է՝ մի՛ վախեցիր, և իր այս խօսքը ուղղուած է հէնց նրան, ով, իբրև նախապայման իր հաւատի, երկնչում է Աստծուց:

Այսպիսով, աստուածավախութիւնը վերածում է արիութեան, քանզի Աստծուց երկնչողը կարիք չունի այլևս ուրիշներից վախենալու, ինչպէս ասում է մեր Տէրը. «Մի՛ զարհուրէք նրանցից, որ մարմինն են սպանում և դրանից յետոյ աւելի բան անել չեն կարող, այլ ցոյց կը տան ձեզ, թէ ումից պէտք է վախենաք: Վախեցէ՛ք Նրանից, Ով սպանելուց յետոյ գեհէն նետելու իշխանութիւն ունի» (Դուկ. ԺԲ 4-5): Սա-

տանան և մարդիկ կարող են ոչնչացնել մարդու մարմինը, բայց միայն Աստուած է, որ իշխանություն ունի ոչ միայն մեր մարմնի և մեր այս անցատր կեանքի վրայ, այլև մեր հոգու և մեր յափտենական կեանքի վրայ: Նա է, որ պիտի դատի մեզ և կարող է մեզ փրկել կամ դատապարտել դժոխքի՝ եթե չզոջանք մեր մեղքերի վրայ և չընդունենք Նրա թանկագին արինը իբրև գին մեր փրկութեան, քանզի մեղաւորների համար Նա «վափող կրակ է» (Եբր. ԺԲ 29): Նա՛ է ամենակարողը, մեր Արարիչն ու Տէրը, ուրեմն ումի՞ց պէտք է վախենանք, ինչպէս սաղմոսերգուն ասում է. «Տէ՛ր, լոյս իմ և կեանք իմ, ես յումմե՛ր երկեայց. Տէ՛ր՝ ապաւէն կենաց իմոց, ես յումմե՛ր դողացայց» (Սաղմ. ԻԶ 1): Պէտք է վախենանք միայն մեկ բանից. Աստծու հանդէպ անհնազանդ լինելուց և Նրանից հեռանալուց: Մինչ գիտակից ենք Նրա ամենակարողութեանը, որդիական սրբազան երկիրդով ենք լցուում Նրա հանդէպ, և Նա էլ մեզ օրհնում է:

Աշխարհում երևան են գալիս բազմապիսի երկիրներ հէնց այն բուպէից սկսած, երբ մարդ դադարում է երկնչել Աստծուց:

Աստծոյ հանդէպ երկիրաձութեան, իսկ մարդկանց նկատմամբ արիութեան մի գեղեցիկ դրուագ է ներկայանում մեզ Ս. Գրքում, երբ աստուածավախ երեք երիտասարդներ՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, մերժում են կատարել Բաբելոնի հեթանոս թագաւորի հրահանգը՝ երկրպագելու ոսկեձոյլ այն արձանին, որ ինքը կանգնեցրել էր իբրև պաշտամունքի առարկայ: Թագաւորը իրեն չանսացող այդ երիտասարդներին որոշում է գցել կրակով լի հնոցի մէջ: Սակայն նրանք անվախօրէն պատասխանում են նրան. «Մեր Տէր Աստուածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բոլորքում կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթէ ոչ, թող քեզ յայտնի լինի, արքայ՛, որ քո աստուածները մենք չենք պաշտի և չենք երկրպագի քո կանգնեցրած այդ ոսկէ արձանին» (Դան. Գ 17-18):

ԻՆՉՊԵՍ Է ՍԵՐԸ ՎԱՆՈՒՄ ԵՐԿԻՒՂԸ

Սա մի խորհուրդ է: Սա այն երկիրն է, որ գերբնական է և, հետևաբար, աստուածային, որը մարդուն ոչ թէ հեռացնում է Աստծուց, այլ դէպի Նրան է ձգում: Նման մի ապրում ունենում է իւրաքանչիւր մեղաւոր, որ գղջում է: Այդպիսուն Սուրբ Հոգին՝ նախ գիտակցութիւն է տալիս անդարադառնալու իր գործած մեղքերի ահաւորութեանը, ինչպէս նաև՝ աչքի առաջ ունենալու Աստծոյ արդարութիւնն ու դատաս-

տանը: Այա մեղաւորը սկսում է լցունել Աստծոյ երկիւղով, արդար դատաստանին ենթարկուելու անդոհանքով: Մակայն հէնց այդ պահին կատարում է անբացատրելին. երկիւղով համակուած մարդը փոխանակ փախչելով՝ անլի է մօտենում Նրան, Ումից երկնչում է, դիմում է իր դատաւորի գիրկը: Այսպիսով, զոջացող մեղաւորը վերստին որդեգրում է իր Երկնաւոր Հօր կողմից, զգենում իր սկզբնական պատմունճանը, նման Ս. Գրքում յիշուած անատակ որդուն, որ վերադառնում է իր հօր մօտ, սակայն ոչ թէ սիրուց դրդուած, այլ նախևառաջ կարիքից ստիպուած և ապա՝ զգալով իր գործած սխալը: Գորովագութիւն հօր սէրն է, որ ներում է իր անատակ որդուն, իսկ այս վեջինս էլ դրանից յետոյ անլի սիրով է փարում հօրը: Ստրկական երկիւղը փոխարինում է որդիական երկիւղով:

ԱՅՍ ՄԱՍԻՆ ԽԻՍՏ ՇԱՀԵԿԱՆ Է ԿԱՐԴԱԼ Ս. ՕԳՈՍԻՆՈՍԻ (354-430) ՀԵՏԵԻԵԱԼ ՏԵՍԱԿԷՏԸ.

«Կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը» (Ա Յովհ. Գ 18): Այսպիսով, սկզբում հաստատում է երկիւղը, քանզի «իմաստութեան սկիզբը Աստծուց երկնչելն է»: Այնպէս է ստացում, որ երկիւղը տեղ է պատրաստում սիրոյ: Իսկապէս էլ, երբ սէրն սկսում է բնակուել քո մէջ, հետզհետէ դուրս է մղում երկիւղը, որպէսզի իր համար տեղ բաց անի: Այն չափով, որ առաջինը աճում է, նոյն չափով էլ երկրորդը նուազում է: Նմանապէս այն չափով, որ սէրը լցնում է քո ներաշխարհը, նոյն չափով էլ երկիւղը դուրս է մղում քո միջից: Առաւել սէր՝ նուազ երկիւղ, իսկ նուազ սէր՝ առաւել երկիւղ: Այնտեղ, ուր գոյութիւն չունի երկիւղ, այնտեղ սէրը զուրկ է համեմատական որևէ հնարաւորութիւնից: Իսկ երբ սէրը կարողանում է բոլորովին դուրս վանել երկիւղը, այն ժամանակ կեանքն ինչքա՛ն ուրախութիւն է պատճառում մեզ, լինի դա այս աշխարհում կամ անդենականում: Հետևաբար, երբ մենք լիութեամբ յագեցած ենք սիրով, ուրեմն ո՞վ կարող է մեզ վնասել թէկուզ այս աշխարհում: Տե՛ս սիրոյ վերաբերեալ առաքեալի ունեցած ցնծութիւնը. «Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղութիւնը, թէ՛ անձկութիւնը, թէ՛ հալածանքը, թէ՛ սովը, թէ՛ մերկութիւնը, թէ՛ վտանգները, թէ՛ սուրբը» (Հռոմ. Ը 35), իսկ Պետրոսն էլ ասում է. «Ո՞վ է, որ կը կարողանայ չարչարել ձեզ, եթէ դուք նախանձախնդիր լինեք բարուն» (Ա Պետր. Գ 13). «Միտոյ մէջ երկիւղ չկայ, և կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը, որովհետև երկիւղը տանջանքով է ու-

ղեկցում» (Ա Յովհ. Դ 18):

Այսպէս, ուրեմն, թող որ երկիւղը պատի քո սիրտը, որպէսզի դրանով սէրն առաջնորդուի այնտեղ, քանի որ դու, եթէ առանց երկիւղի ես, չես կարող արդարանալ: Այս խօսքն առնուած է Ս. Գրքից. «Երկիւղ չունեցողը չի կարող արդարանալ» (Միրաք Ա 27): Հետևաբար, հարկ է, որ նախ երկիւղը լինի, որպէսզի սէրը յաջորդի դրան: «Երկիւղը պաշտանի է, իսկ սէրը՝ առողջութիւն» (*Augustinus, Bib. der Kirchenväter, II, էջ 457-458*):

Ամուսնութեան խորհրդում էլ անկեղծ սէրը հետզհետեւ վանում է տղամարդու և կնոջ միջև գոյութիւն ունեցող սկզբնական կասկածներն ու երկիւղը, այս առթիւ տեղին է յիշել, որ մեր վաղամտիկ մեծ բանաստեղծներից՝ Միսաք Մեծարեւելիցի յիշատակ մնացած՝ իր մօր ամուսնութեան մատանու երեսին փորագրուած կայ հետևեալը. «Կատարեալ սէր մերժէ զերկիւղ» («Էջմիածին» ամսագիր, 1990, Ը-Թ, էջ 63):

ԱՍՏԾՈՅ ԵՐԿԻՒՂԸ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ ԱՂՕԹՔԻ ՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ

Աստծուն նուիրուած պաշտամունքը, իր հաւաքական կամ անձնական դրսևորումներով, անբաժան մաս է կազմում իւրաքանչիւր հաւատացեալի կեանքի: Դրանով նախ փառաբանում ենք մեր Արարչին, և ապա՝ մշտանորոգ կերպով ճոխացնում մեր կեանքը Ս. Հոգու շնորհներով, որի բացակայութեան դէպքում հեշտութեամբ ընկնում ենք չարի անողոք ճիրաններում: Հանապազօրեայ հոգևոր սնունդը մարդու համար նոյնքան և առաւել կարևոր է, ինչքան որ անհրաժեշտ է նիւթական սնունդը՝ պահելու նրա նիւթեղէն մարմինը:

Քրիստոնէաների համար պաշտամունքի հիմնական մասը Բանին Կենաց սպասարկութիւնն է, այսինքն՝ Փրկաբեր Խօսքի հանդիսաւոր հոշակումը, փառաբանումն ու տարածումը: Այդ Խօսքը հէնց ինքը՝ մարմնացած Քրիստոսն է, որ մեզ ներկայանում է իր յափտենական արժէք ներկայացնող գոհաբերութեամբ, մահով և հրաշափառ յարութեամբ: Այդ Խօսքի միջոցով մատուցում ենք մեր գոհութիւնը, հաւատարմութիւնն ու երախտագիտութիւնը Հայր Աստծուն, որի անհուն մարդասիրութեան արգասիքն է Քրիստոսի մարդեղութիւնն ու գոհագործումը:

Ինչպէս իմաստութեան սկիզբը Աստծոյ երկիւղն է, այնպէս էլ պաշտամունքի սկիզբը այդ սրբազան երկիւղի գիտակցութիւնն է, որն

հետզհետեւ փոխակերպում է վստահութեան և սիրոյ:

Երբ սկսում ենք Աստծուն նուիրումս պաշտամունքը, նախ հարկաւոր է կարևորութեամբ անդրադառնանք, թէ ում առաջ ենք կանգնած, և թէ ինչպիսի մեղաւորներ ենք մենք Նրա վեհութեան և սրբութեան դիմաց: Այս համեմատականի ողջ ծավալը մենք տեսնում ենք Ս. Գրիգոր Նարեկացու մօտ, երբ նա դիմում է Աստծուն հետևեալ խօսքերով. «Դու լոյս ես և յոյս, իսկ ես՝ խաւար և յիմար. Դու՝ իսկութեամբ բարի գովելի, իսկ ես՝ համայնին չար և ապիկար» (Նարեկ, Բան 2Գ): Այս գիտակցութիւնը մեզ պարտադրում է բացարձակ պատկառանք և զգաստ վիճակ, այս առումով էլ Ս. Գրքում կարդում ենք. «Թող քո բերանը չփութայ, և ոչ էլ քո սիրտն շտապի՝ խօսելու համար Աստծոյ առաջ, որովհետև Աստուած երկնքում է, իսկ դու՝ երկրի վրայ, դրա համար էլ քիչ թող լինեն քո խօսքերը» (Ժող. Ե 1):

Աստծու և մարդու միջև ընկած հեռաւորութիւնը կարելի չէ սահմանել: Մէկը երկնքում է, միւսը՝ երկրի վրայ: Այս պատկերաւոր բացատրութիւնը մատնանիշ է անում Աստծու բացարձակ գերազանցութիւնն ու վեհութիւնը, որի դիմաց մարդ առաւել ակնածանք պէտք է ունենայ, քան որևէ երկրաւոր իշխանաւորի հանդէպ: Արդարև, շատ անգամ աղօթելիս՝ հաւատացեալը մոռանում է, որ ինքը երկնաւոր և ամենագօր Արքայի առաջ է գտնւում, դրա համար էլ անլուրջ կեցումը քով կամ չնտածուած աղօթքներով օրհնաբանելու փոխարէն՝ անարգում է Աստծու սուրբ անունը: Պաշտամանքների առատութիւնը կամ խօսքերի շատութիւնը չի կարող բռնադատել Աստծուն խնդրարկուների կամակատարը դառնալու:

Հետաքրքրական է իմանալ, որ եգիպտական անտիկ իմաստութիւնն էլ թելադրում է զուսպ ու խոհեմ լինել Տիրոջ տաճարում մատուցող աղօթքների առթիւ: Այս մասին «Անիի Վարդապետութիւնը» կոչուող գրութիւնում (ն. Բ. 900 թ.) կարդում ենք հետևեալը. «Մի՛ գոռա Աստծոյ տան մէջ, քանզի Նա գարշում է պողոտայներից: Երբ անկեղծ սրտով աղօթես՝ Նա գոհացում կը տայ քո փափաքներին, նոյնիսկ այն ժամանակ, երբ քո խօսքերը ծածուկ լինեն, քանզի Նա լսում է քո ասածը և ընդունում քո ընծան» (*A. Bonora, Qohélet, Barcelona, 1994, էջ 106*):

Երբ ամենայն երկիւղածութեամբ կանգնում ենք Աստծու առաջ՝ անկեղծ ու մաքուր զգացումներով աղօթելու, նախ լցում ենք Նրա շնորհներով և ապա մեր մէջ կատարում է այն հրաշալի ու խորհրդա-

ուր յեղաշրջումը, որով երկիւղը վերածուում է որդիական սիրոյ:

Նոյնպէս, երբ պաշտամունքի պաշտօնեան՝ քահանան, բարձրանում է սուրբ Խորան՝ իբրև պատարագիչ ուղղակի շփման մէջ լինելու Աստծոյ հետ. նախ բացարձակ երկիւղածութեամբ ու խոր ջերմեռանդութեամբ աղօթում է՝ դիմելով Տիրոջ ամենագոր Սուրբ Հոգուն. «Յանդիման լինելով Քեզ՝ Ահաւորիդ, հեծութեան ձայնով, բազկատարած մաղթանքով հայցում ենք Քեզանից, մօտենում ենք մեծ դողութեամբ, սաստիկ երկիւղով նախ մատուցելու այս բանաւոր պատարագը» (Նարեկ, Բան ԼԳ): Նոր միայն այս և այսօրինակ աղօթքներից յետոյ Սուրբ Հոգին անխնանալի գործութիւն է տալիս քահանային՝ սպասարկելու Տիրոջ զոհագործութեան խորհրդին: Այնուհետև քարոզում է Աստծոյ անսահման ու գթառատ սէրը՝ իր բանաւոր հօտի հանդէպ և կոչ է արւում. «Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք զի քաղցր է Տէր, պլելուիս»:

Առանց սկզբնական պատրաստութեան՝ զղջումով, աղօթքով և պահեցողութեամբ, Ս Պատարագը դառնում է թէ՛ պատարագիչ քահանայի և թէ՛ անպատրաստ հաղորդուողի համար դատապարտութիւն: Տիրոջ հանդէպ սրբազան երկիւղը անհրաժեշտ է, որպէսզի չկործուենք անլուրջ վերաբերմունք ունենալ եկեղեցական արարողութիւնների նկատմամբ, մանաւանդ այս օրերին, երբ յաճախ ականատես ենք դառնում, թէ ինչպէս արժէք են տալիս եկեղեցական պաշտամունքի միայն արտաքին ձևերին և այդ առթիւ օգտագործուող ճոխ հանդերձանքին կամ սպասքին, երբ շատ անգամ լսում ենք իրենց բուն նպատակից շեղուած անբովանդակալից քարոզներ, որ միտում են հաճոյանալու դիրքի ու նիւթական հարստութեան Տէր մարդկանց: Այդպիսիների համար, ամենայն իրաւամբ, Աստուած կը լինի «լափող կրակ»:

Պաշտամունքի սպասարկու քահանաների մասին այսպէս են գրում մեր եկեղեցու հայրերը.

«Այն քահանան, որ անարժանաբար յանդգնում է մերձենալ սուրբ Սեղանի սպասաւորութեանը, ոչ թէ զերծ կը մնայ աստուածային պատժից, այլ ահեղ հրով և աններելի տանջանքներով կը դատուի, քանզի չկայ աւելի մեծ մեղք, որ կարողանայ բորբոքեցնել Աստծոյ ողջ բարկութիւնը, քան այն, երբ մարդ անարժանաբար մերձենում է քահանայական կարգին: Արդարև անարատին սպասաւորը պարտ է անարատ լինել թէ՛ հոգով և թէ՛ մարմնով, որովհետև անա-

րատի միջոցով է, որ արատաւորներս պիտի փրկուենք» (Յ. Մանդակունի, Ճառեր, Անթիլիաս, 1966, էջ 87):

«Իւրաքանչիւր ժամի համապատասխանող սուրբ Հայրերի աղօթքները անյօթի՛ կատարեցէք և մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հաստքով, մեծ յոյսով, պարզ մտքով, կատարեալ սիրով, ահով ու դողով սպասաւորեցէք աստուածային խորհրդին. խողովակի հոսող ջրի պէս անմտաբար մի՛ անցէք աղօթքի սրբազան խօսքերի միջով, որոնք մատուցում եք՝ սաղմոսերգութիւն լինի, թէ՛ Սուրբ Գրքի ընթերցում կամ ժամերգութիւն, ինչպէս նաև՝ սուրբ Պատարագի և այլ սահմանուած կանոնների քահանայական աղօթքներ»: «Ոչ ոք առանց ճշմարիտ խոստովանութեան, ծածկելով մեղքի գործերն իր հոգում, Տէրունական Խորհրդի սպասաւորութեանը թող չմտենայ, որպէսզի Աստուծոյ բարկութիւնը չշարժի իր և իր աշխարհի վրայ ու դուրս չգցուի աստուածային հարսանիքից՝ խաւարատեսակ մեղքերի պատմուճանով Աստուծոյ եկեղեցին մտնելու համար, որ երկնային հարսնարանի խորհրդանշանն է»: «Արդ, աղաչում ենք՝ երկնային Խորհրդի կատարումը մարմնական գործ մի՛ համարեք, այլ ահով և դողով՝ սպասաւորեք աստուածային խորհրդին, քանզի, օրինակ, եթէ սուրբ սերովբէն ունելիի կարիք ունէր սեղանի վրայ կայծերին մօտենալու համար [տե՛ս Եւ. Զ 6], ապա որքան անելի մենք՝ հողեղեններս ու մեղաւորներս, պարտաւոր ենք մաքուր և զգոյշ լինել նմանօրինակ ճշմարտութեանը մերձենալիս» (Ն. Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, «Գանձասար» հանդէս, 1991, էջ 80–81, 84–85):

Յակոբ Արք. Գլնճեան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԼԵՂՈՒՆ

Գրաբա՛ր, Աշխարհաբա՛ր, թե՛ Ա՛յլ լեզու

ՄՈՒՏՔ

Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան խնդրին մէջ պաշտամունքի լեզուն դասական գրաբարէն դէպի աշխարհաբար թարգմանութիւն եղած է մնայուն հարց մը մօտ հարիւր տարիներէ ի վեր: Յաճախ թելադրուած է որ գրաբարը անհասկնալի ըլլալով հաստացեալին չէր կրնար ծառայել որպէս հաղորդական միջոց Ս. Գիրքը և անոր վրայ հիմնուած ժամապաշտութիւնը հասկնալի դարձնելու: Հետևաբար, անցեալին նոյնիսկ առաջարկեցին աղօթքներն ու շարականները թարգմանաբար պարզաբանել աշխարհաբարի օգտագործումով:

Հարցը սակայն շատ ատելի բարդ է: Այդ մասին նահատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Խորէն Ա. Մուրատբեկեան 1937 թոին «Զեկուցում» կրճատեալ անունին տակ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան յատուկ ծառայուն թղթածրարով լեզուի հարցն ալ կարևորութեամբ առաջադրած էր աղօթքներու, ատետարանական ընթերցումներու և արարողակարգերու մատուցման մէջ: Հարցը բարդ է որովհետև միայն թարգմանութեամբ պիտի չլուծուէին լեզուական և մեկնաբանական հարցերը, որոնք նոյնիսկ, ընդհակառակը, պիտի եղծէին բնագիրներուն իմաստն ու անոնց արտայայտած աստուածաբանութիւնը:

ԲՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՁԸ

Եկեղեցական պաշտամունքային բնագիրներու պարագային մեր առջև պիտի ցցուին աստուածաբանական եզրերու և շարականներու յատուկ երաժշտութեան անկարելի թարգմանութիւնները: Սկիզբէն վճռապէս իմանալու ենք որ Հայ Եկեղեցւոյ շարականները անհպելի են քանի որ անոնց գրաբար լեզուին վրայ է որ երաժաշտութիւնը հիմնուած է և անկարելի է երգել որևէ շարական տարբեր լեզուով՝ սկսեալ աշխարհաբարէն: Եթէ փորձենք նոյնիսկ, պարզապէս այդ շարականները երգած չենք ըլլար, այլ միայն զանոնք հեզնանքի առարկայ դարձուցած կ'ըլլանք: Այդ մասին ոչ մէկ խօսք: Իսկ եթէ որպէս ուսուցման կերպ պիտի թարգմանենք զանոնք դասագիրքի ձևով, այդ անշուշտ

կարելի է և ուսանելի որպէս բնագիր միայն, և ոչ որպէս երգ: Դասապահերը տարբեր են և պաշտամունքը տարբեր են հիմնովին:

Առաւել ևս անցնող դարուն գաղթաշխարհի պատկերը բոլորովին տարբեր նկարագիր ստացաւ, նոյնիսկ աշխարհաբարը սուրբգրական և արտասանելի աղօթքներու պարագային «անգործածելի» եղաւ, տեղական լեզուներու պարտադրանքին տակ: Չմոռնանք նաև որ աշխարհաբար լսող հաւատացեալը պէտք է նաև կարենայ հասկնալ աշխարհաբարը: Շատ լաւ գիտենք որ մեր ներկայ դարուն աշխարհաբարն ալ տեղական լեզուներու վերածելով է որ հասկնալի կը դառնան ընթերցումներն ու շարականները, և հետևաբար գրաբարէն մեծ ուստում մը կատարելով, ի հարկին, անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներով մասամբ միայն կը կատարենք մեր պաշտամունքը:

Ս. ՊԱՏԱՐԱԳԸ՝ ԳՐԱԲԱՐ ԵՒ ԼՐԻՒ ԱՌԱՆՑ ԲԱՅԱՌՈՒԹԵԱՆ

Այս պարագան սակայն շատ զգայուն ըլլալով իր սահմանները պէտք է ունենայ: Մինչդեռ մէկ կողմէն անկարելի պէտք է ըլլայ Սուրբ Պատարագը գրաբարէն տարբեր որևէ լեզուով կատարել, միւս կողմէ սակայն թարգմանուած և հրատարակուած բազմաթիւ պատարագամատոյց գիրքեր պիտի ծառայեն ուսուցման միայն, և ոչ անոր կատարումին: Դասագիրքը տարբեր է այս պարագային Խորհրդատետրէն, որ սրբագան գիրքն է Ս. Պատարագի մատուցման: Արևմտեան լեզուները հարկ եղած ենք օգտագործել որպէս միջոցներ և ոչ նպատակ, որպէսզի առանց եղծելու Հայ Եկեղեցւոյ իսկութիւնն ու նկարագիրը, յաջորդական սերունդներ գաղթաշխարհի մէջ չհեռանան իրենց մայրենի եկեղեցիէն:

Քահանաներ իրենց կոչումին վրայ հաստատ Ս. Պատարագը անպայման կատարելու են գրաբար բնագրով միայն և լրիւ արարողակարգով: Որքան ողբալի է երբ ոմանք կրճատելու միտքով զանց կ'անեն Ս. Պատարագի բացման «Խորհուրդ Խորին» հոգեզմայլ շարականը, կ'անտեսեն իրենց անձին հոգևոր պատրաստութիւնը՝ լուացումով և խոստովանանքով, զանց կ'անեն թափօրը, և հաւատացեալները կը զրկեն անձնական օրհնութիւն ստանալէ՝ խունկով և խաչահամբոյրով: Կը տեսնենք և հիասթափ կ'ըլլանք երբ պատարագիչը, անպատրաստ, անապարանքով, ծածկեալ խորանի ետին պահուրտած, յանկարծ «Օրհնեա Տէր»ով երևան կ'ելլէ: Իսկ անոնք,

որոնք Ս. Պատարագի աղօթքները մասամբ անգլերեն կ'արտասանեն, կ'աղարտեն ամեն ինչ որ Հայ Եկեղեցւոյ յատուկ է:

ՈՐՔԱՆ ՄԵՂԱԴՐԵԼԻ Է ԿՐՃԱՏՄԱՆ ԱՅՍ ՔՄԱՀԱՃՈՅՔԸ

«Կանուխ ժամերուն մարդ չի գար եկեղեցի», կ'ըսեն անփոյթ քահանաներէն ոմանք, «այնպէս որ “Օրհեա՛ Տէր”էն կը սկսինք», ինքզինքնին կանոնին և օրէնքին տէրը կարծելով: Այդպէս մտածողներուն ըսելու ենք որ երբ չես կատարեր կանոնական կարգը, մարդիկ գիտնալով կանուխ չեն գար, կամ երբեք չեն գար, և դուն հոգևոր դաստիարակութեանդ մէջ կը թերանաս և կը մնաս պատասխանատու անոնց ուշ գալուն: Ինչո՞ւ համար մի քանի եկեղեցիներ, որոնք հաստատրիմ կերպով կը կատարեն մուտքի կանոնական կարգը, եկեղեցւոյ մէջ ներկայ կ'ունենան նուագագոյնը մէկ քառորդը հաւատացեալներուն: Մեղադրելի է երբ Պատարագի ընծաներու մատուցումը կը պատրաստուի վարագոյրի ետին մի քանի վայրկեաններու ընթացքին «անպատրաստ» քահանային կողմէ: Ատուածաբանական և պաշտամունքային խոր իմաստ ունի Ընծայից Պատրաստութիւնը: Քրիստոսի Մարդկոյթեան խորհուրդն է որ փակեալ խորանով կ'ընծայարելոյի, և վարագոյրը երբ կը բացուի Քրիստոս կը յայտնուի և Ս. Խորանէն իջնելով Տիրոջ աշխարհ շրջիլը կը խորհրդանշէ: Ինչպէս գեղջել այս բոլորը և ինչ համարձակութեամբ զրկել հաւատացելոց իսկական ներկայութիւնը որպէս Եկեղեցի Մարմինը Քրիստոսի:

ԾԻՍԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐԸ

Գլխաւորաբար հինգ են անոնք. Աստուածաշունչ Մատեան, Ժամագիրք, Շարակնոց, Պատարագամատոյց, Մաշտոց, Ճաշոց, և Տաղարան: Իւրաքանչիւրը իր տեղը ունի օրական և տարեկան պաշտամունքի երկայնքին՝ ըստ բովանդակութեան: Աստուածաշունչէն է որ կը քաղենք ամենօրեայ ընթերցումները՝ Հին և Նոր Կտակարաններէն, որոնց կը յաջորդէ Հաւատոյ Հանգանակը: Մաշտոցը եկեղեցւոյ Խորհուրդներու մատակարարման անձեռնմխելի գիրքն է: Քահանային առձեռն մատեանն է ան, որով կը կատարէ Մկրտութեան, Դրոշմի, Պսակի և Հաղորդութեան և մնացեալ բոլոր խորհուրդները, առանել ննչեցեալներու Յուղարկաւորութեան ու Թաղման Կարգը՝ դարձեալ ընդունուած գրաբար լեզուով: Հայ Եկեղեցին կը հաւատայ որ գրաբարով արտասանուած բանաձևերը միայն վաւերական են ու

ագդեցիկ: Ամէն պարագայի անփոխարինելի են գրաբար օրինութիւններն ու բանաձևումները որոնց անմիջապէս կրնայ յաջորդել թարգմանութեանց միջոցը՝ ստանալէ ետք գրաբարի վերջնական կնիքը:

Ժամագիրքը ամենէն գործածելին է օրական ժամապաշտութեան համար, իսկ Ճաշոցը մեծագոյն հատորն է Հայ Եկեղեցւոյ մէջ, ուր կան Ս. Գրքի գրեթէ լրի բովանդակութիւնը, ըստ օրուան տօնին կամ յիշատակին, ինչպէս նաև արարողակարգերու ամբողջական միատրները, ինչպէս Ջրօրհնէքի, Խաչահանգիստի, Ոտնլուայի, Խաղողօրհնէքի, Խաչվերացի Թափօրին և այլ կարգերու, հայ և ուղղափառ եկեղեցական հայրերու ընդարձակ աղօթքներով միասին: Ծաշոցը գրեթէ անգործածելի է այժմ, և սակայն եկեղեցիներ պրակներու վերածելով յիշեալ արարողակարգերը ըստ աւուր պատշաճի առձեռն կը գործածեն զանոնք, գրաբարով, աշխարհաբարով և տեղական այլ լեզուներով, միշտ նկատի ունենալով որ Պատարագամատոյց գիրքը բացառութիւն կազմելով բոլորովին անկախ կը մնայ և տարբերակ չի կրնար հանդիսանալ այլալեզու գործածութեամբ:

ՄԵՐ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Հայ Եկեղեցին իր իսկութեանը մէջ հայկական հաստատութիւն մըն է, և եթէ աշխարհաբար լեզուն պիտի որդեգրենք որպէս օժանդակ և ոչ որպէս փոխարինող գրաբարին, բարեկարգութեան ոգիին համաձայն քայլ մը առած կ'ըլլանք: Նոյն հասկացողութեամբ արևմտեան երկիրներուն մէջ՝ Եւրոպա, Ամերիկաներ, Աստրալիա, ուր անպայման գործածուելու են տեղական լեզուները որպէս ուսանելի միջոցներ, և ի հարկին որպէս գործադրելի՝ յատկապէս պսակադրութեան և անձնական աղօթքներու պարագաներուն: Հոս ևս շատ զգոյշ ըլլալու ենք որ զանոնք իբր օրինակ չգործածենք Ս. Պատարագի բնագրին և մատուցման համար: Ս. Պատարագը հասարակաց Խորհուրդն է հաւատացեալներու միացե՛ալ պաշտամունքին համար, և ո՛չ անձնական, ինչպէս են Խորհուրդները: Պատարագամատոյցը վեր է ամէն բանէ և հարկ անհրաժեշտ է անոր մատուցումը կատարել լրի աւանդական լեզուով և կերպով: Հաւատացեալներու պարտքը ևս անհրաժեշտ է, սերտել և յարատև մասնակցիլ արարողութեանց, և ոչ թէ առարկայական կեցուածք որդեգրել և զանգատիլ թէ բան չեն հասկնար կատարուածէն:

Դոկտ. Զաւէն Ա. Քինյ. Արզումանեան

ԱՂՈԹՔԻ ՊԷՍ...

Լոյսդ հեղո՛ւ, Տե՛ր էակիդ
Լոյս անքնին, լոյս անմատոյց
Թող, որ տեսնեմ աներևոյթն
Զգամ խորին գաղտնիքն գոյին...

Մթան մէջ ես չմոլորիմ
Օրերուս մէջ իմ տաղտկալի
Հանապազօր հացին գերի
Սպասարկու միայն նիւթին...

Միրոյդ լոյսը կաթեցուր, Տե՛ր
Միրտիս մէջ որ ընդարձակի
Չդառնայ ան պարունակն նեղ
Կիրքերուս մութ, իղձերուս սին...

Յոյսը լոյսիդ միշտ առկայծի
Որոնեմ զայն քուն թէ արթուն
Միտքս, սիրտս լոյսով լեցուին
Եւ լոյս բաշխեն յար ամէնքին...

Երան Գոյումճեան

THE SYMBOLIC WEALTH OF THE ARMENIAN ‘KHACH‘K‘ARS’



“Asegnakordz” (embroidered) khach‘k‘ar at Goshavank

An encounter with ‘khach‘k‘ars’ (stonecrosses) is an outstanding event that will leave its mark for ever on the sensitive mind open to every aspect of the sacred. Indeed, one can be fascinated by their elaborate and sometimes unusual ornaments as well as by their solemn bearing.

The term ‘khach‘k‘ar’, composed of two words ‘khatch’, meaning cross and ‘k‘ar’ meaning stone, refers to big slabs of stone bearing a flat cross embossed in their mass. These, standing flat on the ground or heaved on bases, isolated or lined up in groups of two or more, offer no doubt an impressive sight.

From the Xth century onwards, an epitaph with the date of the sculpture, the name of the artist, the circumstances having motivated its creation and other precious details to any historian has been inscribed in the back of these stones. They are always westward orientated so that any onlooker has to face east to watch them.

The motives around the cross are not decorations, but symbols related to the message transmitted through the slab.

The “Metz-Mazra” ‘khatch’k’ar’ (881) has all the typical symbols of ancient Armenian crosses, i.e. the cross, the number eight, solar discs, boughs and leaves, pine cones or palm nuts and the pyramid.

THE CROSS

The cross is one of the oldest universal signs used since the dawn of times with an unequivocal meaning. No matter what shape has been given to it by different civilizations, it remains the symbol of life, of the dynamics of the world that we see.

EIGHT

The extremities of the Armenian cross are indented in order to obtain a cross with 8 points. Eight represents Christ the Redeemer. It is reckoned as the symbol of revival, the glory of Christ, the ‘Logos’ through which *all is and without which nothing can be*. Eight and its multiples have a great importance in the architecture of the Armenian Church. According to the ‘Mashtots’, the church has to be built on 16 pillars consecrated to the 12 apostles and 4 evangelists. An octagonal dome is raised on top of the Armenian Church and that is what distinguishes it from the neighbouring Greek churches and Moslem mosques. Eight being the number of Christ, the cross with 8 points represents Him: the symbols around the cross figure the essential characteristics of Christ the invisible.

SOLAR DISCS

The eight extremities of Armenian crosses terminate with solar discs. The circle, a line without beginning nor end is the symbol of infinity, and therefore of divinity, more so when it’s centre is marked with a point. It is also the image of the sun and, as such, it embodies the symbolic value of the light of Christianity. In the Armenian Church, this important symbol is emphasized during the morning service:

“O Light, born of the light, sun of righteousness, ineffable generation, Son of the Father...

O Light, fountain of goodness, procession from the Father, Holy Spirit of God....

O Light, indivisible Holy Trinity, we, born of the earth, glorify thee always together with the heavenly.....

Shine forth upon our souls thine intelligible Light
At the rising of the light of the morning.”

The solar discs remind us that Christ is pure light incarnated. The cross becomes the icon of Christ-Light.

LIFE

The boughs placed at each side of the cross at its base and the fruits hanging at its top evoke inevitably the image of a tree. At the start, it was thought to be the tree of life. But, the Life that Christ promises has neither beginning nor end. It is a conscience that pervades a reality lying beyond the perception of human faculties and is not affected by their destruction. It is that life that is illustrated by the boughs, those symbols of vitality and renewal that dash forward from the basis of the cross. And the two pine cones or palm nuts at the top, symbols of eternity, state that whoever tastes those fruits will not know death.

Those crosses do not represent trees of life but make us meet the token of Christ himself:

“I am the Way” that will lead you to the Intelligible Father

“I am the Truth”, that is the divine Reality

“I am the Life” the Being itself, the one that belongs to eternity.

THE MOUNTAIN

From the very beginning, the icon-crosses of the Word have been set on a pyramid rising in tiers. Like the physical mountain, the inner mountain is an invitation to rise above the world below. These sober crosses recall that it is up there, at the end of the ascension that the *ultimate mystery of the soul and God will be indescribably revealed* amidst the wonder of the dazzling light.

The “archaic” ‘khatch’k’ars’ have revealed to us their true identity as icons, not of Jesus mortal, but of Jesus Alive, born from the Alive. Armenians did not adore these singular engraved crosses, but the radiant and enlivening Principle of which they were only the image, and which their distant Aryan ancestors called ‘*Astuats*’, *Light in itself*, the name that designates God today.

How wonderful that a few signs engraved in a stone can have the power to illustrate such a mysterious reality.

Rev. Fr. Dr. Abel Manoukian

The history of the song Giligia

Since all Armenians, especially those with Cilician roots, know and sing this national treasure, the song "Giligia", with great enthusiasm and ardour, I decided to provide historical information about it.

Due to its continued popularity, one would think that "Giligia" was composed recently and is a contemporary song. However, in reality, this song is one of the oldest songs of our modern musical history, which started in the second half of the 19th century.

Any discussion of nationalistic songs such as "Giligia," "Hayasdan yergir trakhdavayr," "Der getzo to zHays," "Mer Hayrenik," "Dzidzer-nag" and others must place them in their historical context. Fortunately, in the case of "Giligia" we are assisted by the fact that we know the names of both its lyricist, Nahabed Rusinian (1819-1876), and its composer, Capriel Yeranian (1827-1862).

Born in Efkere, Gesaria, Nahabed Rusinian was a doctor by profession. He was also a political activist, nationalist philosopher and well-known writer. He received his primary education in the village Armenian school which had been founded by his father. In 1829 he moved to Constantinople and studied at the St-Garabed school of Scutari.

Like many other promising Armenian students of the time, Rusinian continued his higher education in Paris. In 1844 he studied medicine at the Sorbonne. While in Paris, Rusinian also absorbed the spirit of nationalism sweeping the European continent. In this atmosphere, Rusinian and Dzerents (Hovsep Shismanian, 1822-1888) founded the Araradian Association, with the goal of raising the patriotic awareness of Armenians. Rusinian was now an active contributor to the renaissance of Armenian nationalism. After graduating in 1851, Rusinian returned to Constantinople. There, along with other leading Armenian minds such as K. Odian, N. Balian, S. Vichenian, G. Utujian, M. Aghatone, Rusinian worked on the cultivation of modern Armenian by refinement of the Armenian language, expansion of the Armenian press and the opening of new schools to educate new generations.

Until the formation of the "National constitution", the religious, educational and other communal institutions were run by the wealthy sarafs, amiras and the Patriarch, in their discretion. The working class was deprived of its civil rights.



Nahabed Rusinian

However, all changed when enthusiastic young European-educated Armenians attempted to enter Armenian affairs upon their return.

In 1853, with the agreement of the national religious higher committees of the Armenian community of Constantinople, the “Education council” (Ousoumnagan khorhourt) was formed with the above mentioned individuals.

With the book “Modern Armenian Grammar” (Oughakroutyouan Arti

Hayots Lezvi), Nahabed Rusinian started the battle for the use of modern Western Armenian rather than classical Armenian. In 1854, the Patriarch of Constantinople, a supporter of the traditionalists (kraparaganner), forbade the reading of the book and burned all copies.

Soon after, the National Council (Azkayin Joghov) was formed with the above mentioned individuals, and after preparing new by-laws based on the principles of the Belgian constitution and the spirit of the French revolution, and after sharp arguments between the reformists and the supporters on one side and the church, the circle of amiras and their supporters on the other, the reformists won. On May 24, 1860, the National Council accepted and adopted the new by-laws which, at the suggestion of Rusinian, was called the “National Constitution”. The Armenians of the Ottoman Empire became known as “Nezamnamei Milleti Ermenia” and were considered a distinct religious community. Armenian communal life in Constantinople started to be organized accordingly.

In this new nationalistic atmosphere, Nahabed Rusinian also wrote poetry, including the poem “Giligia.” The poem was dedicated to that part of Western Armenia which was home to the last Armenian Kingdom and was still populated by Armenians. As such, the poem “Giligia” was a representation and true expression of the Armenian people's longings for its lost statehood and aspiration for the homeland. “Giligia” was inspired by a French poem “Ma Normandie” by Frédéric Bérat.

In 1862, the most talented and well-known composer Capriel Yeranlian formed the “Armenian Lyre” (Knar Haygagan) Musical Association not

only the first of its kind in Constantinople but also the entire near East.

The members of the Association were renowned musicians like D. Tchoukhadjian, Y. Dndesian, N. Tashjian, B. Cherchian, K. Khanjian, K. Sinanian, R. Papazian, the Italian composer K. Foscini and other famous intellectuals, writers, journalists, lecturers like M. Beshigtashlian, K. Odian, N. Rusinian, H. Svajian, K. Agathon, M. Mamourian, M. Hekimian, S. Papazian and others.

This Association, along with its activities, free lectures, teaching of Armenian and western notations, formed the first symphony orchestra in Constantinople conducted by K. Sinanian. The Association and its orchestra provided special programs that opened people's minds and tastes to western musical culture and presented and spread new Armenian patriotic songs.

It was at this time that Capriel Yeranian published “Giligia,” along other patriotic songs, with notes in the “Knar Haygagan” musical journal.

WHO WAS CAPRIEL YERANIAN?

Yeranian was one of the brilliant composers of the time. A fine and sensitive song writer. He was born in Constantinople towards the end of 1827. His father Ohan Yeranian was a mason and had a large family; four sons and two daughters.

Until the age of fourteen, Yeranian attended Constantinople's “Mother School” (“Mayr Varjarian”), after which his parents gave him as an apprentice to his uncle Antreas, who had a fez making business. A year passed and Yeranian showed no interest in his uncle's fez business. His co-workers used to snatch his papers about music and take them to his uncle to demonstrate that there was no hope for this apprentice.

His parents then sent him back to school. He participated in student productions (“hanteses”) and church singing. His beautiful voice attracted attention. Beside the Limonjian notation system then in use, which was also called the “Armenian notation system,” Yeranian learned and mastered the European notation system. As noted above, one of the members of the Armenian Lyre Musical Association was Nahabed Rusinian.

The membership of Rusinian and Yeranian lead to partnership, turning the “Giligia” poem into the famous “Giligia” song. They published it in one of the 1862 issues of “Knar Haigagan” journal, of which, unfortunately there is no known example currently in existence. The melody and lyrics of

the song were so beautifully interwoven that since that time it has not come off the lips of the Armenian people.

Unfortunately, Capriel Yeranian's creative life was cut short with his untimely death towards the end of 1862. The secret of the longevity of this song lies in the words of the poem, which were the central philosophy of the time, and in its deeply emotional yet very simple melody, the perfect marriage of lyrics and melody.



Capriel Yeranian

I will forgo an analytical presentation of the musical structure of the song, as this writing is addressed to the general public. However, as with all aspects of Armenian life, unfortunately, patriotic and revolutionary songs were politicized. Although not a revolutionary song, "Giligia" was a nationalistic one. As such, it was counter to the internationalist philosophy of the Bolsheviks. Consequently, it was forbidden soon after the 1920 Bolshevik takeover of the Republic of Armenia. Nonetheless, all Diasporans continued to sing it as a patriotic song.

This changed in 1956. With the election of Archbishop Zareh Payaslian as Catholicos of the Holy See of Cilicia, the seat passed under Dashnag dominion. In protest, most non-Dashnags stopped singing "Gligia." Thereafter, the song remained primarily in the realm of pro-Dashnags and the Catholicossate of Cilicia.

With the resurgence of Armenian nationalism in Soviet Armenia after 1965, patriotic and revolutionary songs started to be resurrected by Soviet Armenians as national treasures. I remember towards the end of the 1970's, I attended a concert at Saint Vartan's cathedral in New York

City, where a group of stars from Soviet Armenia presented a superb program which ended with the famous and unparalleled singer Hovhannes Badalian singing the revolutionary song “Zartir lao.”

Given the enthusiasm of the audience and the apparent stamp of approval of Soviet Armenia, an impressed AGBU dance group started to present the song in special dance steps. I do not know if the instructor of the dance group knew that the song was written in praise of the fedayi Apo (a.k.a. Arapo). The song “Giligia” also had the same fate. Once it was sung in Soviet Armenia, it started to enjoy universal popularity in the Diaspora.

In conclusion, the song “Giligia,” born of the partnership of Rusinian and Yeranian, presents the Armenian people with a timeless combination of poetry and music that encapsulates the Armenians' sense of loss and hope. As such, having already accompanied many generation through national rebirth, genocide and statehood won, lost and regained, “Giligia” remains inspiring, young and possesses all the prerequisites to do so for many generations to come.

Krikor Pidedjian

Honorary Professor at the Komitas State Conservatory, Yerevan

GILIGIA

When the doors of hope open,
And winter has fled our land,
O, beautiful land of Armenia
When your sweet days shine brightly,
When the swallow returns to his nest,
When the trees bloom,
I wish to see my Giligia,
The country that gave me the sun.

I have seen the plains of Syria,
The mountains and cedars of Lebanon,
I saw the land of the Italians,
Venice and its gondolas,
There is no island like our Cyprus,
But, no place is more beautiful
Than my Giligia,
The country that gave me the sun.

There is a time in life,
When desire comes to an end,
A time when the soul
Longs for its memories,
When the lyre becomes cold,
Bidding a final farewell to love,
I wish to fall asleep (to die — K.P.) in my Giligia,
The country that gave me the sun.

By Nahabed Rusinian
Translated by Iris Papazian

2017՝ Զահրատի Մահուան 10-րդ Տարելից

Զահրատ, իր գրչակից եղբոր՝ Զարեհ Խրախունիին հետ, Իսթանպուլահայ գրականության անդամության մեջ բանաստեղծական դպրոց մը բացաւ, ձևի և խորքի իր նորարարութեամբ: Իսթանպուլահայ այս երկու քերթողները իրենց ստեղծագործութիւններուն ընդմէջէն տեսան պարզ Մարդը՝ բանուորը, գործագուրկը, աղբահաւաքը, ներկարարը, ծորակ ծախողը... և այլն: Անոնք իրենց բանաստեղծութիւններուն մէջ վեր հանեցին մարդկային անհատականութեան բացառիկութիւնը, զգացումները, ապրումները: Զահրատի բանաստեղծութիւններուն մէջ ապշեցուցիչ հակադրութիւնը և բախումը կայ մարդու ներքին աշխարհին և շրջապատող աշխարհին միջև, մարդու օտարացման խնդիրը, մարդու մինակութեան, լքուածութեան և անհատի ներքին ընտրութեան խնդիրը, այս կեանքին մէջ իմաստի մը փնտռութիւնը, ձգտումը մարդու անհատական աշխարհին մէջ իր սեփական տեղը գտնելու...:

Ո՞Վ Է ԶԱՀՐԱՏ:

Բուն անունով Զարեհ Եալտըզճեան: Ծնած է Պոլսոյ Նշանթաշ թաղին մէջ, 10 Մայիս, 1924-ին: Երեք տարեկանին ան կորսնցուցած է հայրը, քսանամեայ մայրն ալ՝ կրկին ամուսնացած է: Զինք խնամած է մօրենկան հայրը՝ հաճի Լևոնը: Ուսումը սկսած է իր թաղամասի՝ Բանկալթիի Մխիթարեան վարժարանին մէջ և աւարտած՝ 1942-ին: Այնուհետև մէկ տարի ուսանած է դեղագործական վարժարանի մը մէջ: Երեք տարի յաճախած է բժշկական համալսարան, սակայն կիսատ ձգելով, իբրև սպայ մտած է զինուորական ծառայութեան: Ուսման տարիներուն, ան միաժամանակ աշխատած է տարբեր բնոյթի գործեր: 1946-ին ըլլալով հիմնադիր անդամներէն մէկը Մխիթարեան Սանուց միութեան, Զահրատը դարձած է միութեան 1948-ին հիմնադրուած «Ման» ամսաթերթի խմբագրական կազմի անդամ և Ռոպէր Հատտէճեանի, Վարուժան Աճէմեանի և Զարեհ Խրախունիի հետ խմբագրած՝ «Մարմարա» օրաթերթի «գրական-գեղարուեստական» բաժինը: Եղած է ուսուցիչ:

Զարեհ Եալտըզճեան բանաստեղծութիւններ գրել սկսած է պատանեկան տարիներէն: Առաջին բանաստեղծութիւնը՝ «Աստղ մը» վերնագիրով լոյս տեսած է 1943-ին, «Ժամանակ» օրաթերթին մէջ: Այնու-

հետև, յատկապես 1946-էն ետք իր քերթումները լոյս տեսած են «Ճառագայթ», «Նոր Օր», «Մարմարա» թերթերուն, ինչպէս նաև «Ման», «Հանդէս մշակոյթի» և այլ հանդէսներու մէջ: Զահրատի գրական անունը ինք որդեգրած է. իր վկայութեամբ կ'իմանանք, թէ օգտուած է Ծոփաց իշխան Զարեհի անունէն, զոր նաև Զահրատ անուանած են: Ան խորհած է, որ Զահրատ անունը Զարեհին համազօրն է:

Առաջին գիրքով («Մեծ Քաղաքը») Զահրատ հանդէս եկած է բաւականաչափ ուշ՝ 1960-ին: Այդ ժողովածոն հաստատուն սկիզբ էր, բանաստեղծական երևոյթ, որ հետագային ամբողջանալու էր նոր գիրքերով. «Գունաւոր սահմաններ» (1968), «Կանաչ Հող» (1976), «Բարի Երկինք» (1971), «Մէկ քարով երկու զարուն» (1989), «Մաղ մը ջուր» (1995), «Ծայրը ծայրին» (2001), «Զուրը պատէն վեր» (2004):

Զահրատը վախճանած է 21 Փետրուար, 2007-ին:

Երևանի մէջ իր առաջին բանաստեղծութեան ժողովածոն՝ «Մեծ Քաղաքը» երևցած է Ալ. Թօփճեանի նախաձեռնութեամբ: Առաջին գիրքով իսկ Զահրատ զարմանք պիտի առթէր բոլորին՝ քերթելու իւրայատուկ եղանակով մը, որ կը խախտէր գրական ընկալեալ կառոյցները ու շեշտը կը դնէր իմաստալից և պարզ բառախաղերու վրայ: Կ'անտեսէր թէ՛ կէտադրութիւն, թէ՛ տաղաչափական կանոններ:

Շատ շատեր անկասկած, ինչպէս ամէն բանի սկիզբ, դէմ պիտի ըլլային այս ինքնատիպ շարժումին, նոյնիսկ գրագէտ Գեղամ Սևան, Զահրատի դպրոցական դասընկերը, Երևանի մէջ կարդալէ ետք անոր կարգ մը բանաստեղծութիւնները պիտի գոչէր. «Մեծարեցէն, Թեքէտանէն ու Զարիֆեանէն ետք՝ ա՛յս պիտի ըլլար պոլսահայ բանաստեղծութեան ուղին...» (1970): Յամենայն դէպս, Զահրատի առանձին այս իրայատուկ շարժումը դպրոց հանդիսացաւ և ներշնչեց ու կը ներշնչէ տակաւին շատ մը գրողներ: Վահէ Օշական իր Զահրատի քերթողական արուեստին մասին իր ուսումնասիրութեան մէջ կը հաստատէ. «Կայ զահրատեան աշխարհ մը՝ զանազանելի ուրիշներէ, ինքն իր մէջ օրկանական կապերով պրկուած, կայ գաղափարներու կառոյց ու ցանց»:

Զահրատ քննադատութիւններուն դիմաց իսկ վերելքն ի վեր մագլցեցաւ: Իրեն ներշնչող եղան իր գրչակից եղբայրները՝ Զ. Խրախունի, Ռոպէր Հատտեճեան, Զաւէն Պիպէռեան և ուրիշներ: Ո՛չ յուսալքուեցաւ քննադատութիւններուն դիմաց, ո՛չ ալ անելորդ խանդավառութեան յանձնուեցաւ: Միշտ իր ներքին կշռոյթը պահած և խորհողի ու բանաստեղծի գիտակցութեամբ ան շարունակեց ներ-

քին մղումով ստեղծագործական իր աշխատանքները կատարել: Ան իր քերթողական արուեստին մասին վկայություն ընելով կ'ըսէ. «Ես առանց որևէ յաակնութեան, գրեթէ խաղի համար սկսայ գրել, բայց ժամանակի մէջ լուրջ գործ դարձաւ կարդացողներուն կողմէ: Որոշ շրջան մը փորձեցի յանգաւոր գրել, բայց արագ հասկցայ՝ աղուոր չէ, իմն չէ: Փոխեցի ուղղութիւնը: Սկսայ պարզ գրել, առանց յանգի: Բայց չկարծէք գրածս բոլորովին անկաշկանդ է, իր ներքին կշռոյթը ունի, ներդաշնակ է, իր ներքին երաժշտութեամբ ու ներքին իմաստներով մէկ բանաստեղծական գրգիռ ունի... Քննադատներուն դիմաց իմ գէնքս իմ խօսքս եղած է... Աստուած եթէ ձիրք տուած է՝ մարդիկ չեն կրնար խել գայն»:

Զահրատեան քերթողութեան առընթեր սկիզբը քննադատաբար մօտեցող Գեղամ Սևան, հետագային իր գնահատականը կը յայտնէ ըսելով. «Պարզ, սովորական, առօրեայ, շատ անգամ նոյնիսկ անկարևոր թուացող ճշմարտութիւնների երգիչն է Զահրատը: Երգում է ճշմարտութիւններ, որոնք զարմանալիօրէն մեր առջև միանգամից ծառանում են իրենց մինչ այդ անյայտ կողմերով, որով, ինչ խօսք, պարտադրում են իրենց գեղեցիկ լինելը...»:

Զահրատի անվիճելի կարողութիւններէն մէկն ալ իր սակաւապետութիւնն է, պարզութիւնը, յապաւումը ակելորդաբանութիւններու, քիչ բառերով շատ բան և կարևոր բան ըսել կարենալն է: Երբեմն նոյնիսկ ամբողջ քերթուած մը կը հիսւէ՝ առանց մէկ անգամ իսկ բայ գործածելու, ինչպէս՝ «Մրերմութեան համար» քերթուածին մէջ.

Ես քեզի դուն

Դուն ինձի դուն

Եսով- դունով

Տեղով տունով — տունով տեղով

Դուք մեզի մենք — մենք ձեզի դուք

Շաքար համով — սուրճի հոտով

Համով հոտով

Իրարու տուն

Իրարու դուն

Ես քեզի դուն — դուն ինձի դուն

Մտերմութիւն

Բայ չկայ, բայց կառոյց կայ, կշռոյթ կայ, ինքնատիպ յօրինուածք կայ, «բան»ի ստեղծում կայ՝ քիչ տարրերով, պարզ նիւթերով, որոնցմէ

սակայն ոչ իսկ մէկ հատը կրնաք խախտել: Խօսքի նոյն զսպուածութիւնը, ժուժկալութիւնը կը տիրէ գրքին «Յայրագիր Նորիկի» բաժնին մէջ, ուր բանաստեղծը անջրպետի մարդուն՝ Նորիկին ողիսականը կը պատմէ, ու կ'ըսէ ամենայն պարզութեամբ.

Մեզմէ մէկը հոն

Երբ անեզրութեան դուռը կը զարնէ

Մեր ողբերն այնքան կը պզտիկնան հոս

Որ չ'արժեր երգել

«Քարանտազ» բաժնին մէջ երբ կը բնութագրէ Զալցպուրկը՝ միայն 4 տողով և 10 բառով և կ'ըսէ.

Քարէ երգահաններ

Քարէ ջութակներ առած

Քարին — եւ իրենց —

Անմահութիւնը կ'երգեն

Ուրեմն բան մը կայ, որ արժէ երգելը:

Հետո ըլլալով պատրաստ կաղապարներէ Զահրատ կը գրէ ներըմբռնումով, անզգալաբար, «շնչելու պէս»: Զահրատ կը գրէ այնպէս որ գրածը կամ ըսածը անակնկալ ըլլայ ընթերցողին: Մրամտութիւն ու երգիծանք կայ անոր քերթողութեան մէջ, սակայն ծիծաղը, որ կը պարզնէ ան ընթերցողին, միևնոյն ատեն կը հրամցնէ ծանրութիւնը ու խորութիւնը տուեալ երևոյթին կամ պատմածին: Քերթուած ըսածոյ պիտի հարուածէ՝ կը բնորոշէ ան իր բանաստեղծութեան մէջ.

Աղուոր քերթուած մը կը հարուածէ

— Երբ կարդաս

Պէտք է ամուր կենաս ոտքերուդ վրայ

Բառախաղի վարպետն է Զահրատը, որու գերիբապաշտական բանաստեղծութիւնները յանկարծ կը վերջանան անակնկալ վերջին տողով մը, «որոնք Զահրատեան անակնկալի մը ապտակը կ'իջեցնեն».

Պար կը խաղանք

բառերուն հետ բառ

քարերուն հետ քար կը խաղանք

ու ծառերուն հետ ծառէ ծառ կը խաղանք

չարերուն հետ

չենք խաղար:

Զահրատի ստեղծագործութիւններուն մէջ ընթերցողին հետ հաղորդակցելու իրայատկութիւնն ալ այն է, որ իրապաշտական

պարզ պատումով ու նկարագիրով ներկայացնել է տք իրերն ու երեւոյթները, ան ամէն ինչ բաց է ի բաց պատրաստ միտքը չի հրամցներ ընթերցողին, այլ այնպիսի վարպետութեամբ կը քօղարկէ, որ այդ քօղարկումը իւրաքանչիւր ընթերցողին ազատ մեկնաբանութեան առիթ հանդիսանայ: Ընթերցողը ի՞ր այդ պահու թելադրանքով և իր պահանջներուն համաձայն հաղորդակցութեան մէջ կը մտնէ քերթողութեան հետ, կը հասկնայ ըստ իր ընկալման որակին, ազատօրէն կը կարողանայ ի՞րը տեղադրել հոն և իրմով ամբողջացնել. ահա թէ ինչո՞ւ Զահրատի համոզմամբ.

Քերթուած մը պէտք է ըլլայ հունտի պէս

Ու երբ աւարտի

Չաւարտի — ծիլ տայ — վերապրի մեզի հետ

Եզրակացնելով ըսենք, որ Զահրատ ապրող բանաստեղծ է թէ՛ իսթանպուլահայ գրականութեան, թէ՛ արևմտահայ գրականութեան, և թէ՛ համաշխարհային գրականութեան համար:

Սօսի Միշոյեան-Տապաղեան





Գրություններ
Հայոց Թեմի
Գրականության
Կենտրոնի
Գրքերի Կառավարության
Վերջին Կարգադրությունները